

2013-2017թթ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՊՐՈՖԻԼ

Երևան
2019



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻԳՐԱՑԻՈՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլի մշակման գործընթացի ինստիտուցիոնալ հիմքերի վրա կազմակերպման, ինչպես նաև առաջին թողարկման պատրաստման գործում աջակցելու համար՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայությունը շնորհակալություն է հայտնում Միգրացիոն քաղաքականության մշակման միջազգային կենտրոնի Հայաստանյան ներկայացուցչությանը:

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլը մշակվել է ի կատարումն ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 19-ի թիվ 44 արձանագրային որոշման:

© ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայություն

Բովանդակություն

	Ներածություն	4
	Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին	5
	Գործնական ամփոփում	6
	Աղյուսակների ցանկ	8
Բաժին Ա	Միգրացիոն գործընթացները հայաստանի հանրապետությունում	10
Ա.1.	Միգրացիոն գործընթացները հայաստանի հանրապետությունում	10
Ա.1.1	Միգրացիոն գործընթացների զարգացման պատմական ակնարկ	10
Ա.2.	Իմիգրացիան Հայաստանում	14
Ա.2.1.	Իմիգրացիոն հոսքերի ծավալները և ծագման երկրները	14
Ա.2.2.	Իմիգրանտների ժողովրդագրական կազմը	15
Ա.2.3.	Հայաստանում բնակվող օտարերկրացիներ	15
Ա.2.3.1.	Կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներ	16
Ա.2.4.	Օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերում	22
Ա.2.5.	Միջազգային պաշտպանության տրամադրում	23
Ա.2.6.	Անօրինական իմիգրացիա	26
Ա.3.	Էմիգրացիան Հայաստանից	27
Ա.3.1.	Էմիգրացիոն հոսքերի ծավալները, նշանակակետ երկրները	27
Ա.3.2.	Էմիգրանտների սոցիալ-ժողովրդագրական կազմը	32
Ա.3.3.	Էմիգրացիայի դրդապատճառները	32
Ա.3.4.	Արտերկրում ապաստանի հայց ներկայացրած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները	33
Ա.3.5.	Ռեադմիսիա	33
Ա.3.6.	Ինտեգրում և վերաինտեգրում	35
Բաժին Բ	Միգրացիայի զգոցությունները	39
Բ.1.	Միգրացիա և ժողովրդագրական իրավիճակ	39
Բ.2.	Միգրացիա և զարգացում	43
Բ.2.1	Տնտեսական զարգացում	43
Բ.3	Միգրացիա, աշխատաշուկա և զբաղվածություն	46
Բ.3.1.	Աշխատաշուկայի առանձնահատկությունները	46
Բ.3.2.	Աշխատանքային միգրացիա	49
Բաժին Գ	Միգրացիայի կառավարման համակարգը	52
Գ.1.	Միգրացիոն քաղաքականության գլխավոր ուղղությունները	52
Գ.2.	Միգրացիոն գործընթացները կարգավորող օրենսդրությունը	53
Գ.3.	Ինստիտուցիոնալ կառուցվածքը	55
Գ.4.	Միջազգային համագործակցությունը միգրացիոն ոլորտում	57
	Հավելվածներ	
Հավելված 1	Աղյուսակներ	58
Հավելված 2	Միգրացիայի և ապաստանի բնագավառում կառավարման և քաղաքականության մշակման ինստիտուցիոնալ կառուցվածքը	85

Ներածություն

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլ (ԸՄՊ) առաջին վերլուծական զեկույցն, իրենից ներկայացնում է 2013-2017 թվականների միգրացիոն տվյալների մանրամասն վերլուծություն:

ԸՄՊ-ի մշակումը բարդ և բազմաշերտ գործընթաց է, որը ենթադրում է շահագրգիռ մարմինների սերտ համագործակցություն, առանց որի հնարավոր չէ իրականացնել ներկայացվող բազմապիսի տվյալների հավաքագրումը, մշակումը և վերլուծությունը: Միգրացիոն պրոֆիլի առկայությունն առաջնային նշանակություն ունի միգրացիոն արդյունավետ և թիրախավորված քաղաքականության մշակման գործընթացի կազմակերպման և իրականացման համար: Բացի այդ ԸՄՊ-ը նաև հարուստ աղբյուր է հետազոտողների, լրագրողների և միգրացիոն խնդրով հետաքրքրված մասնագետների համար:

Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության կողմից՝ ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 19-ի թիվ 44 արձանագրային որոշման 4-րդ կետի համաձայն:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ սույն զեկույցի մշակումը արդյունք է բազմաթիվ գերատեսչությունների (ՀՀ ոստիկանություն, ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ կենտրոնական բանկ, միջազգային կազմակերպություններ, անկախ փորձագետներ) սերտ համագործակցության և ջանասեր աշխատանքի: Այս համատեքստում Միգրացիոն ծառայությունը շնորհակալություն է հայտնում բոլոր գործընկերներին կատարված բեղմնավոր աշխատանքի համար:

Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի Հանրապետության մասին

Աշխարհագրական տեղեկություններ

Ընդհանուր տարածք (քառ. կմ)¹

2017 29,743 քառ.կմ

Տնտեսություն և զարգացում

ՀՆԱ մեկ շնչի հաշվով (դոլար)²

2017 3.872

Մարդկային զարգացման ինդեքս³

2017 0,755

Բնակչություն:

Տարեվերջի դրությամբ⁴

2017 2.972.732 մարդ

Օտարերկրացիները թիվը

2017 15.807 մարդ

Միջազգային միգրացիա

Զուտ միգրացիայի մակարդակը

2017 -8,1⁵

1000 բնակչի հաշվով

¹ Վիճակագրական տեղեկագիր

² Ընդհանուր տնտեսական ցուցանիշներ, Աղյուսակ 38

³ ՄԱԶԾ, Մարդկային զարգացման զեկույց, Մարդկային զարգացման ցուցանիշներ, <http://hdr.undp.org/en/countries/profiles/ARM>

⁴ Մշտական բնակչությունը ըստ սեռի և տարիքի տարեսկզբի դրությամբ, Աղյուսակ 33

⁵ Հիմնական ժողովրդագրական ցուցանիշներ, Աղյուսակ 32

Գործնական ամփոփում

Սույն զեկույցը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայության կողմից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. հոկտեմբերի 19-ի արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլի կառուցվածքը և ցուցանիշների ցանկը: ԸՄՊ-ը բաղկացած է երեք հիմնական տեղեկատվական և վերլուծական բաժիններից.

Բաժին Ա՝ Միգրացիոն գործընթացները Հայաստանի Հանրապետությունում,

Բաժին Բ՝ Միգրացիայի ազդեցությունը,

Բաժին Գ՝ Միգրացիայի կառավարման համակարգը:

Իմիգրացիա:

Վերջին տարիներին Հայաստանում արձանագրվում է իմիգրացիոն հոսքերի աճի միտում. այսպես օրինակ 2017թ. նախորդ տարվա համեմատ հաշվառված իմիգրանտների թիվը աճել էր 15%-ով և կազմել 9,384 անձ:

Կացության կարգավիճակի հիմքով բնակվող օտարերկրացիներ

ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած և վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թվի վերաբերյալ կիսամյակային և տարեկան վիճակագրական հաշվետվությունների ստացման ձևը և կարգը ներդրվել է 2014թ., ուստի տվյալները հասանելի են սկսած 2015թ.-ից:

2017թ. տարեվերջի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը կազմում էր 15,807 մարդ: Ճիշտ է 2015 թ.-ի համեմատ այս ցուցանիշը ունեցել է բացասական աճի միտում, որը կազմել է 8 տոկոս, սակայն անհրաժեշտ է նշել, որ նվազումը ամբողջությամբ պայմանավորված էր հատուկ կացության կարգավիճակ ունեցողների (որոնց 99%-ը ազգությամբ հայերն են) թվի կրճատմամբ: Ինչ վերաբերում է ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ունեցողների թվին (որոնց թվում մեծամասնություն են կազմում այլ ազգիները), ապա այն գրանցել է աճ: Վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների և քաղաքացիություն չունեցող անձանց թիվը 2017թ. վերջի դրությամբ կազմել է ՀՀ մշտական տարեկան միջին բնակչության 0,5 տոկոսը:

ՀՀ-ում ապաստան հայցող անձիք

ՀՀ-ում ապաստան հայցողների թիվը 2013-2017 թվականներին գրանցել է փոփոխական նշանակություններ: Այդպես, 2017թ. ստացվել է 91 ապաստանի դիմում, ինչը 1,4 անգամ պակաս է 2014թ. համեմատ սակայն 26 դեպքով ավելի 2016թ. համեմատ: 2017թ. վերջի դրությամբ ՀՀ-ում գտնվել են ապաստանի ընթացիկ հայցերում ներառված ավելի քան 150 անձինք: Դիտարկվող հնգամյակում ՀՀ-ում փախստականի կարգավիճակ է ստացել 734 անձ:

Անօրինական միգրացիա

2014-2017թթ. ընթացքում ՀՀ-ում հայտնաբերվել է 14,790 անօրինական միգրանտ: Օրինական կացության իրավական հիմքերը խախտելու համար վարչական

պատասխանատվության է ենթարկվել 12,784 օտարերկրացի (2013թ. տվյալները բացակայում են): Նույն ժամանակահատվածում քրեական պատասխանատվության ենթարկվել է 783 օտարերկրյա քաղաքացի: 2,531 օտարերկրացիներ ճանաչվել են անցանկալի անձ, նրանցից 1,410-ը՝ 2017թ.-ին:

Էմիգրացիա:

Էմիգրացիայի վերաբերյալ վիճակագրության հավաքագրումը և ամփոփ տեղեկատվության ձևավորումը բարդ և ծավալուն աշխատանք է: Էմիգրացիայի ծավալների գնահատման համար հիմք են հանդսանում ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տնային տնտեսությունների տարեկան հետազոտությունները, ՀՀ պետական սահմանի հատումների վիճակագրությունը, ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալները, ինչպես նաև զանազան հասանելի աղբյուրներից (Եվրոստատ, ՄԱԿ ՓԳՀ) հավաքագրված տվյալները:

Դիտարկվող հնգամյակում էմիգրացիայի միջին տարեկան ծավալը կազմել է 33,2 հազար մարդ: Էմիգրանտների ժողովրդագրական կազմի վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է նշել, որ ՀՀ պետական ռեգիստրի տվյալներով արտերկրում հյուպատոսական հաշվառման վերցված ՀՀ քաղաքացիները հիմնականում երիտասարդ, աշխատունակ տարիքի անձինք են:

Համաձայն տարբեր հետազոտությունների, էմիգրացիայի վրա ազդող հիմնական գործոնները 2013-2017թթ. եղեն են հանրապետության տնտեսական վիճակը, գործազրկության բարձր մակարդակը, ցածր աշխատավարձերը և քաղաքական անկայունությունը:

Արտերկրում սովորող / ուսանող բնակչություն

Կրթության ոլորտում միջազգային համաձայնագրերի հիման վրա արտերկրում սովորող Հայաստանի քաղաքացիների թիվը 2017թ.-ին կազմել է 205 մարդ, որոնք հիմնականում սովորել են Ռուսաստանի Դաշնությունում (157 մարդ):

Բացի այդ, համաձայն Եվրոստատի տվյալների 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ԵՄ և ԵԱԱԸ անդամ պետություններում կրթության հիմքով տարեվերջին վավեր կացության կարգավիճակ ունեցել են 1,646 ՀՀ քաղաքացիներ:

Միջազգային պաշտպանություն որոնող ՀՀ քաղաքացիներ

ՀՀ-ից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերում բավականին մեծ մասնաբաժին ունի արտերկրում (հիմնականում Եվրոպական երկրներում) ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների հոսքը: Համաձայն ՄԱԿ ՓԳՀ տվյալների 2017թ. ընթացքում աշխարհի տարբեր երկրներում ապաստանի առաջին հայց է ներկայացրել 7,800-ից ավելի ՀՀ քաղաքացի: Անհրաժեշտ է նշել, որ այս հոսքի մեծությունը 2013թ. համեմատ 2016-2017թթ. գրանցել է բավականին զգալի աճ: Այդպես 2013թ. արտերկրում ապաստան հայցած Հայաստանի քաղաքացիների թիվը կազմել է մոտ 4,900 մարդ, 2016թ.՝ ավելի քան 8,300, իսկ 2017թ.՝ մոտ 7,800 մարդ: Նույն ՄԱԿ ՓԳՀ վիճակագրական տվյալների համաձայն 2017թ. փախստականի կարգավիճակ ստացած ՀՀ քաղաքացիների թիվը 2013-ի համեմատ աճել է ավելի քան 1,5 անգամ և կազմել է ավելի քան 1,300 մարդ:

Աղյուսակների ցանկ

h/h	Աղյուսակի վերնագիրը	Էջ
Աղյուսակ 1	ՀՀ սահմանահատումները 2013-2017թթ.	59
Աղյուսակ 2	Իմիգրացիոն հոսքերի դինամիկան ՀՀ-ում 2013-2017թթ.	59
Աղյուսակ 3	Իմիգրանտների թիվը ըստ քաղաքացիության երկրների, 2015-2017թթ.	60
Աղյուսակ 4	Իմիգրանտների սեռային կազմը	60
Աղյուսակ 5	ՀՀ-ում բնակվող օտարերկրացիների ցուցանիշների դինամիկան	60
Աղյուսակ 6	ՀՀ-ում հաշվառված օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրների	61
Աղյուսակ 7	Օտարերկրացիների ժողովրդագրական կազմը	61
Աղյուսակ 8	Ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների վերաբերյալ ցուցանիշների դինամիկան 2015-2017թթ.	61
Աղյուսակ 9	Վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրների, 2015-2017թթ.	62
Աղյուսակ 10	Մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների վերաբերյալ ցուցանիշների դինամիկան 2015-2017թթ.	63
Աղյուսակ 11	Վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրների, 2015-2017թթ.	63
Աղյուսակ 12	Հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների վերաբերյալ ցուցանիշների դինամիկան 2015-2017թթ.	64
Աղյուսակ 13	Վավեր հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրների, 2015-2017 թթ.	64
Աղյուսակ 14	Օտարերկրացիների թվի դինամիկան	65
Աղյուսակ 15	Կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրի 2015-2017 թթ.	66
Աղյուսակ 16	ՀՀ-ում ուսում ստացող օտարերկրացիների թիվը ըստ քաղաքացիության երկրներ	67
Աղյուսակ 17	Տվյալներ ՀՀ քաղաքացիություն ստացած օտարերկրացիների մասին	68
Աղյուսակ 18	Միջազգային պաշտպանության տրամադրման ցուցանիշների դինամիկան	68
Աղյուսակ 19	2013-2017 թթ. ՀՀ-ում ապաստան հայցածների թիվը ըստ քաղաքացիության երկրների	68
Աղյուսակ 20	Տվյալներ անօրինական միգրացիայի վերաբերյալ	69
Աղյուսակ 21	Հայաստանից էմիգրանտների վերաբերյալ տվյալներ	69
Աղյուսակ 22	Օտարերկրյա պետություններում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը ըստ սեռի և տարիքային խմբերի	70
Աղյուսակ 23	Օտարերկրյա պետություններում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը ըստ սեռի և բնակության երկրների	71
Աղյուսակ 24	Կրթության բնագավառում կնքված միջազգային պայմանագրերի հիման վրա արտերկրում ուսում ստացող ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրների	72
Աղյուսակ 25	Տարեվերջի դրությամբ Եվրոպական Միության անդամ պետություններում վավեր կացության կարգավիճակ ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրների	73
Աղյուսակ 26	2016-2017 թթ. մարդկանց թրաֆիկինգի և շահագործման ենթարկված ՀՀ քաղաքացիների թիվը	73
Աղյուսակ 27	ՀՀ քաղաքացիների միջազգային պաշտպանության մասին տվյալներ	74

Աղյուսակ 28	Արտերկրում ապաստան հայցած ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրերի	74
Աղյուսակ 29	Արտերկրում փախստականի կարգավիճակ ստացած ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրների	74
Աղյուսակ 30	Տվյալներ հետընդունման վերաբերյալ	75
Աղյուսակ 31	Ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ՀՀ քաղաքացիությունը հաստատված անձանց թիվը ըստ երկրների	75
Աղյուսակ 32	Հիմնական ժողովրդագրական տվյալները	75
Աղյուսակ 33	Բնակչության ժողովրդագրական կազմը	76
Աղյուսակ 34	ՀՀ բնակչության սեռատարիքային կառուցվածքը	77
Աղյուսակ 35	Քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը	78
Աղյուսակ 36	Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների գուտ հոսքերի ծավալն ըստ երկրների	79
Աղյուսակ 37	Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների գուտ հոսքերի ծավալն ըստ գործունեության տեսակների	80
Աղյուսակ 38	Ընդհանուր տնտեսական ցուցանիշներ	81
Աղյուսակ 39	Դրամական փոխանցումներ	81
Աղյուսակ 40	Աղքատության ցուցանիշներ, տնային տնտեսությունների տվյալներ	81
Աղյուսակ 41	հետազոտությունների տվյալների համաձայն տնային տնտեսությունների բաշխումը ըստ նյութական վիճակի (%)	82
Աղյուսակ 42	ՀՀ-ում ստացված և արտերկրից ստացված տնային տնտեսությունների մասնաբաժնի բաշխումը ըստ եկամտի աղբյուրների	82
Աղյուսակ 43	Աշխատուժի ցուցանիշներ	83
Աղյուսակ 44	2014-2016թթ. միգրացիոն տեղաշարժերի բաշխվածությունը ըստ իրենց բնույթի	84
Աղյուսակ 45	Վերջին հետազոտությունների տվյալների համաձայն միգրանտների և միգրացիոն տեղաշարժերի հիմնական ցուցանիշներ	84
Աղյուսակ 46	2015-2017 թթ-ին իրականացված հետազոտությունների տվյալների համաձայն տնային տնտեսությունների (տ/տ) բաշխվածությունը ըստ արտաքին միգրացիոն գործընթացներում ներգրավվածության	85

ԲԱԺԻՆ Ա. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա.1. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա.1.1 Միգրացիոն գործընթացների զարգացման պատմական ակնարկ

ԽՍՀՄ փլուզումը և նորանկախ պետությունների ստեղծումը ուղեկցվեց բնակչության աննախադեպ միգրացիոն տեղաշարժերով: Հայաստանում այս երևույթը հատկապես մեծ մասշտաբների հասավ 1988թ. սպիտակյան ավերիչ երկրաշարժի, և Սումգայիթում, Կիրովաբադում, Բաքվում և Ադրբեջանի այլ բնակավայրերում ազգությամբ հայ քաղաքացիների զանգվածային ջարդերի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և հարակից տարածքներում պատերազմական գործողությունների հետևանքով: Այս իրադարձությունները, ինչպես նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական շրջափակումը, հանգեցրին զանգվածային միգրացիոն հոսքերի առաջացմանը ինչպես Հայաստանից այնպես էլ դեպի Հայաստան: Դա զանգվածային տեղաշարժերի առաջին փուլի սկիզբն էր, որը տևեց մինչև 1992 թվականը:

Ընդհանուր առմամբ, 1988-1991 թթ-ի ընթացքում հանրապետությունն ընդունել է ավելի քան 420 հազար փախստականների և հարկադիր տեղահանվածների, որոնց հիմնական մասը՝ գրեթե 360 հազար մարդ, Ադրբեջանից, մնացածը՝ նախկին ԽՍՀՄ այլ հանրապետություններից: Նույն տարիներին հանրապետությունից հեռացել են ընդհանուր առմամբ շուրջ 160 հազար հայաստանաբնակ ադրբեջանցիներ:

Որպես սպիտակյան երկրաշարժի անմիջական հետևանք 1989թ. ընթացքում աղետի գոտու բնակավայրերից Հայաստանից դուրս էվակուացվեցին ընդհանուր առմամբ մոտ 200 հազար մարդ (հիմնականում կանայք և երեխաներ): 1989-1990թթ. ընթացքում նրանց 3/4-ը (150 հազար մարդ) վերադարձավ հանրապետություն: Այս ամենի հետևանքով Հայաստան չվերադարձած գրեթե 50 հազար անձինք հետագայում ձգելով աղետի գոտու աննախանձելի իրողություններում գտնվող իրենց ընտանիքների անդամներին և մերձավորներին, արդեն 1989-1990թթ. սկիզբ դրեցին հանրապետության բնակչության արտահոսքի նոր ալիքին, ինչը 1992-1994թթ. ընթացքում վերաճեց զանգվածային արտագաղթի, որն առավել ակտիվ ընթացք ունեցավ հենց աղետի գոտում:

Հայաստանից զանգվածային արտագաղթի երկրորդ փուլը վերաբերում է 1992-1995 թվականներին: Դա կապված էր Խորհրդային Միության փլուզումից հետո երկրում տնտեսական ճգնաժամի հետևանքով առաջացած սոցիալ-տնտեսական և բարոյահոգեբանական գործոնների, և, հատկապես, Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից Հայաստանի ճանապարհատրանսպորտային և առևտրատնտեսական շրջափակման հետ: Այդ ժամանակաշրջանում արտագաղթողները հիմնականում երկրում տնտեսական ճգնաժամի պատճառով աշխատատեղեր կորցրած բարձրակարգ և որակյալ մասնագետներն էին: Արտագաղթի այս ալիքի արդյունքում բնակչության գրեթե մեկ

հինգերորդը հեռացավ Հայաստանից, ինչը հանգեցրեց ուղեղների զանգվածային արտահոսքի: Տարբեր գնահատականներով, 1992-1995 թթ-ին միգրացիայի բացասական մնացորդը կազմել է ավելի քան 600 հազար մարդ կամ բնակչության մոտ 17%-ը:

Արտագաղթի հսկայական մասշտաբները և դրա բացասական ազդեցությունը պետության անվտանգության և հասարակական կյանքի բոլոր կողմերի վրա՝ այս երևույթի կարգավորումը վերաճեցին պետության համար առաջնային նշանակություն ունեցող հարցի:

Արտագաղթի երրորդ փուլը ներառում է 1995-2001 թվականները և բնութագրվում է արտագաղթի ծավալների նվազմամբ: Այն հիմնականում պայմանավորված էր երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի կայունացմամբ: Մյուս կողմից, պետության միգրացիոն ներուժը զգալիորեն փոքրացել էր նախորդ տարիների արտագաղթի մեծ ծավալների արդյունքում: Հիմնականում, այդ ժամանակահատվածում տեղի է ունեցել այն միգրանտների ընտանիքի վերամիավորման գործընթացը, որոնք ավելի վաղ էին մեկնել երկրից: Ըստ գնահատականների, այս շրջանում մոտ 600 հազար մարդ մեկնել էր երկրից, մինչդեռ մուտքերի թիվը կազմել էր շուրջ 350 հազար⁶:

Չորրորդ փուլը ժամանակային առումով իր մեջ ներառում է 2002-2009 թթ. և բնութագրվում է որպես ուղևորաշրջանառության ծավալների աճի և միգրացիայի բացասական մնացորդի հետագա կրճատման ժամանակաշրջան:

Այս փուլը աչքի ընկավ տարեց տարի աճող միջազգային ուղևորաշրջանառության (արտաքին միգրացիայի) ծավալների աճով և նախորդ փուլի համեմատ միգրացիայի բացասական մնացորդի նվազմամբ: Միգրացիոն իրավիճակի նման փոփոխումն առաջին հերթին հետևանք էր այդ տարիներին Հայաստանի տնտեսական զարգացման համեմատաբար բարձր տեմպերի: Այս փուլում միգրացիայի միջին տարեկան ցուցանիշը կազմել է -3,5 հազար, իսկ առանձին տարիներին այն ունեցել է նույնիսկ դրական նշանակություն: Որոշ հետազոտությունների տվյալներով 2002-2007թթ. ՀՀ-ից արտագաղթել են 700.000 անձինք, մինչդեռ ներհոսքը կազմել է 600.000⁷:

Հինգերորդ փուլ (2010թ. ի վեր): Այս ժամանակահատվածում տեղի է ունեցել ՀՀ բնակչության արտաքին միգրացիոն հոսքերի ծավալների աճ, և ըստ վերջին ընտրանքային հետազոտության⁸ արդյունքների, այդ աճի երևույթը ձեռք է բերել արագացող միտում: Եթե 2012-2014թթ. դրա միջին տարեկան նշանակությունը եղել է մոտ 35 հազար մարդ, 2013-2015թթ.՝ 37,5 հազար մարդ, ապա 2014-2017 թթ-ին՝ արդեն 40 հազար մարդ: Անհրաժեշտ է նշել, որ 2017թ. տեղի է ունեցել այս ցուցանիշի նվազում՝ նախորդ տարվա համեմատ -44.2%-ով: Հանրապետության միգրացիոն իրավիճակում շարունակում է զգալի դեր խաղալ ժամանակավոր աշխատանքային միգրացիայի

⁶ ՄԱԶՄ, «Միգրացիա և մարդկային զարգացում՝ հնարավորություններ և խնդիրներ», Հայաստան 2009, <http://europeandcis.undp.org/home/show/87C7B39D-F203-1EE9-B27B76D1ABF1CEE6>

⁷ ՄԱԶՄ, «Միգրացիա և մարդկային զարգացում՝ հնարավորություններ և խնդիրներ», Հայաստան 2009, <http://europeandcis.undp.org/home/show/87C7B39D-F203-1EE9-B27B76D1ABF1CEE6>

⁸ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան. «ՀՀ արտաքին միգրացիոն իրավիճակի եռամյա (2015-2017թթ.) մշտադիտարկում՝ ընտրանքային հետազոտության միջոցով», ղեկավար՝ տ.գ.թ. Ռ. Եգանյան:

երևույթը, որն իրականացվում է ինչպես կարճատև (սեզոնային), այնպես էլ տևական (անորոշ) ժամկետով աշխատանքի նպատակով ուղևորություններ կատարելու տեսքով:

2000 թվականին ընդունված «Հայաստանի Հանրապետության բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը» դարձավ Հայաստանի միգրացիոն քաղաքականության ոլորտում ընդունված առաջին համապարփակ փաստաթուղթը: Այս փաստաթղթի ընդունմամբ պետական մակարդակով առաջին անգամ սահմանվեց միգրացիոն քաղաքականությունը, դրա նպատակները և խնդիրները: Սահմանվել են միգրացիոն հոսքերի աջակցության բազմազան տարբերակներ՝ հաշվի առնելով պետության շահերը, ինչպես նաև նախատեսվել միջոցառումներ ուղղված էմիգրացիայի բացասական ազդեցության նվազմանը: Էմիգրացիոն հոսքերի փոփոխությամբ պայմանավորված նոր խնդիրների առաջացման պատճառով հայեցակարգը վերանայվեց 2004թ-ին.:

2010թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման հերթական հայեցակարգին:

Ինչպես պաշտոնական վիճակագրությունը, այնպես էլ հետազոտական տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագաղթի հիմնական վեկտորը ուղղված է դեպի հետխորհրդային երկրներ, մասնավորապես՝ դեպի Ռուսաստան (բոլոր արտագաղթողների մոտ 75% -ը), Եվրոպական երկրներ (մոտ 15%) և ԱՄՆ (մոտ 10%: Փորձագետների գնահատմամբ, 1990թ-ից 2013թ-ը բնակչության մոտ 30 տոկոսը կամ 1/3-ը մասնակցել են արտաքին միգրացիոն տեղաշարժերին: Մեկնելու հիմնական պատճառը եղել է զբաղվածության խնդիրը:

Ինչպես արդեն նշվեց Էմիգրացիոն հոսքերում ամենամեծ մասնաբաժինը կազմում են աշխատանքային միգրանտները: 2013 թվականին անցկացված ընտրանքային հետազոտության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ քաղաքացիների 10 մեկնումից 8-ը արտերկրում աշխատանքի տեղավորվելու պատճառով է:

Նշված ժամանակահատվածում իմիգրացիոն հոսքերը համեմատաբար փոքր են եղել: Դրանք հիմնականում ձևավորվել են աշխատանքային միգրանտների, ուսանողների, ազգությամբ հայ լինելու հիմքով Հայաստանում կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների և ՀՀ-ում ապաստան հայցող անձանց հաշվին:

Սահմանահատումների դինամիկան


2013-2017թթ. տեղի է ունեցել ուղևորահոսքերի (ՀՀ ժամանողների և ՀՀ-ից մեկնողների) թվի աստիճանական աճ (բացառությամբ 2015թ.): Այդպես եթե 2013թ. գրանցվել էր 2,476.3 հազար մուտք և 2,507.5 հազար ելք, ապա 2017թ. Հայաստանի Հանրապետության պետական սահմանին հաշվառվել է 3.398 հազար մուտք և 3.425 հազար ելք: Անհրաժեշտ է նշել, որ աճը պայմանավորված է եղել ինչպես ՀՀ քաղաքացիների շարժունակության ավելացմամբ, այնպես էլ օտարերկրացիների թվի աճով: 2013թ. համեմատ ՀՀ քաղաքացիների թիվը ուղևորահոսքերում աճել է գրեթե 1 մլն.-ով: Օտարերկրացիների պարագայում աճը կազմել է մոտ 900 հազար:

ՀՀ քաղաքացիների մասնաբաժինը ուղևորահոսքերի ընդհանուր թվաքանակում դիտարկվող հնգամյակի ընթացքում գրանցել է որոշակի նվազում 59.1%-ից (2013թ.) հասնելով 57.0%-ի՝ 2017թ.-ին:

Օտարերկրյա քաղաքացիների ելքերի քանակը 2017 թվականին կազմել է 122,4% 2016 թվականի համեմատ, 16,8 տոկոսային կետով ավել քան 2013 թվականին: Մինչդեռ 2017 թվականին ՀՀ քաղաքացիների ելքերի քանակը 3 տոկոսային կետով զիջում է 2013 թվականի ցուցանիշին (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 1):

Դիտարկվող հնգամյակում ՀՀ քաղաքացիները գրանցել են ընդհանուր տեղաշարժերի միջինը 57%-ը: 2017 թվականին արկրից մեկնող քաղաքացիների մասնաբաժինը, 2013 թվականի համեմատ գրանցել էր նվազում 2,1 տոկոսային կետով (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր1):

Գծապատկեր 1. Սահմանահատումների մասնաբաժինները 2013-2017թթ-ին (%)



Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ:

Օտարերկրացիների կողմից Հայաստանի նկատմամբ հետաքրքրության աճի մասին է վկայում նաև նրանց տրամադրված վիզաների թվի դինամիկան:

Այդպես 2013-2017թթ. ընթացքում ՀՀ դիվանագիտական առաքելությունները և հյուպատոսական հիմնարկները տրամադրել են 144,203 մուտքի վիզա՝ ներառյալ E-visa-ները: Նույն ժամանակահատվածում ՀՀ սահմանին տրամադրվել է 669,013 մուտքի արտոնագիր:

2013-2015թթ. տրամադրված վիզաների թիվը տարեց տարի գրանցել է աճի միտում՝ տարեկան միջինը 24 հազարով, 2016-2017թթ. տեղի է ունեցել տրամադրված վիզաների ընդհանուր թվի նվազում նախորդ տարվա համեմատ՝ տարեկան միջինը 28.7 հազարով: Վերջին տարիներին արձանագրված նվազումը հիմնականում պայմանավորված էր որոշ երկրների համար վիզային ռեժիմի վերացմամբ և այն երկրների քանակի ավելացմամբ, որոնց քաղաքացիները կարող են այցելել Հայաստանի Հանրապետությունը առանց վիզայի:

Ա.2. ԻՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Դեպի ՀՀ իմիգրացիոն հոսքերի ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրներն են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումները, Միգրացիոն ծառայության տվյալները, ինչպես նաև տնային տնտեսությունների ուսումնասիրությունների արդյունքները: Բացի այդ սույն բաժնում օգտագործված են նաև ՄԱԿ ՓԳՀ-ի, ՄՄԿ-ի և այլ միջազգային կազմակերպությունների կողմից հավաքագրված և հրապարակված տվյալները:

Ա.2.1. Իմիգրացիոն հոսքերի ծավալները և ծագման երկրները

Իմիգրանտների հոսքի մասին տեղեկատվությունը հաշվարկվում է ըստ տնային տնտեսությունների հետազոտություններից ստացված տվյալների: 2013-2017թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետություն ժամանած իմիգրանտների տարեկան թիվը տատանվել է 12.3-ից մինչև 8.2 հազարի միջակայքում: 2013-2016թթ իմիգրացիայի ծավալը ունեցել է նվազման միտում՝ 2013թ. համեմատ 2016թ. ցուցանիշը նվազել էր 1,5 անգամ: Ճիշտ է, արդեն հաջորդ՝ 2017թ., գրանցվել է իմիգրանտների թվի աճ 112.2% նախորդ տարվա համեմատ, սակայն 2013թ. համեմատ 2017թ. ցուցանիշը շարունակել է մնալ ցածր (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 2):

Հաշվառված իմիգրանտների ըստ քաղաքացիության երկրների բաշխումը ցույց է տալիս, որ 2017թ. նրանց մեծամասնությունը եղել է Հայաստանի քաղաքացի (75.1%), այլ երկրների քաղաքացիները կազմել են 24,9% (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 2): Այստեղ անհրաժեշտ է նշել, որ միջազգային սահմանման համաձայն 12 ամսվա բացակայությունից հետո վերադարձող քաղաքացիները համարվում են իմիգրանտներ և հենց դրանով է բացատրվում ՀՀ քաղաքացիների առկայությունը իմիգրանտների թվաքանակում:


Գծապատկեր 2. Միգրանտների բաշխումը ըստ քաղաքացիության (%) 2015-2017թթ.



Աղբյուր՝ Հաշվարկված է ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա

ՀՀ քաղաքացի չհանդիսացող իմիգրանտների բաշխումն ըստ քաղաքացիության երկրների ցույց է տալիս, որ 2017թ. նրանց մեծամասնությունը ժամանել է Վրաստանից (28,4%), Սիրիայից (26,2%), Ռուսաստանի Դաշնությունից (14,6%), Իրանից (7,8%), Լիբանանից (5,7%) և ԱՄՆ-ից (4,1%), իսկ այլ երկրներից ժամանածների տեսակարար կշիռը տատանվել է 3,6% և 0,4 % միջև (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Իմիգրանտների բաշխումը ըստ քաղաքացիության երկրների 2015-2017թթ.




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Ա.2.2. Իմիգրանտների ժողովրդագրական կազմը

Իմիգրանտ բնակչության վերաբերյալ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն հաշվառման կանգնած իմիգրանտների սեռային համամասնությունը եղել է գրեթե հավասար : Բացառություն է կազմել 2015թ., երբ կանանց մասնաբաժինը իմիգրանտների ընդհանուր թվում կազմել է գրեթե 58% (Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Իմիգրանտների սեռային համամասնությունը (%) 2014-2017թթ.



Աղբյուր՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Ա.2.3. Հայաստանում բնակվող օտարերկրացիներ


2017թ. վերջի դրությամբ ՀՀ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման կանգնած օտարերկրացիների թիվը կազմել է 3,933, ինչը 20%-ով գերազանցել է 2016թ. ցուցանիշը և գրեթե կրկնել՝ 2013թ.-ինը՝ 3,928 օտարերկրացի: ՀՀ-ում հաշվառված օտարերկրացիների մեծամասնությունը՝ 82.1%-ը, բնակվել են քաղաքային բնակավայրերում, ինչը 4.6 տոկոսային կետով զիջում էր 2013թ. ցուցանիշին և 1.7 տոկոսային կետով գերազանցում 2016թ.-ինը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 5):

Բնակչության ընդհանուր թվում հաշվառված օտարերկրացիների մասնաբաժինը 2017թ.

կազմել է 0.1%:

2017թ. ՀՀ-ում հաշվառման վերցված օտարերկրացիների մեծամասնությունը՝ 75.5%-ը, եղել են Ռուսաստանի Դաշնության (65,1%), Իրանի (5,8%) և Ուկրաինայի (4,6%) քաղաքացիներ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 5 և Աղյուսակ 6):

Գծապատկեր 5. 2013-2017 թթ-ին ՀՀ-ում հաշվառված օտարերկրյա քաղաքացիների թիվը ըստ քաղաքացիության երկրների (%)



Աղբյուր՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Մինչև 15 տարեկան բնակչության թվաքանակում հաշվառված օտարերկրացիների մասնաբաժինը 2015-2017թթ. կազմել է մոտ 0.02%: 65 տարեկան և ավելի տարիքային խմբի օտարերկրյա քաղաքացիների տեսակարար կշիռը ամբողջ բնակչության նույն տարիքային խմբի թվում 2015թ. կազմել է 0,095%, 2016թ.՝ 0,084%, իսկ 2017թ. այս ցուցանիշը կազմել է ընդամենը 0.097%:

Ա.2.3.1. Կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիներ

Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած և կիսամյակի վերջի ու տարեվերջի դրությամբ վավեր կացության կարգավիճակ ունեցողների վերաբերյալ վիճակագրական տվյալները սույն բաժնում ներկայացված են սկսած 2015թ.-ից, քանի որ նոր, միջազգային չափորոշիչներին համապատասխանող հաշվառման համակարգը ներդրվել է 2014թ.-ին և մինչ այդ գործած համակարգի շրջանակներում հավաքագրված տվյալները համեմատելի չեն նոր մեթոդաբանությամբ մշակված հաշվետվությունների հետ: «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է ՀՀ-ում օտարերկրացիների կացության երեք կարգավիճակ՝ ժամանակավոր, մշտական և հատուկ:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է ցանկացած օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն Հայաստանի Հանրապետության տարածքում մեկ տարի և ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

Այդպիսի հանգամանքներ կարող են լինել՝

- ուսումը, կամ
- աշխատանքի թույլտվության առկայությունը, կամ

- Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը, ծնողը կամ զավակը լինելը, կամ
- Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում մշտական կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու ամուսինը կամ մերձավոր ազգականը (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) լինելը, կամ
- ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելը.
- ազգությամբ հայ լինելը
- օրենքով սահմանված այլ դեպքեր:

Ժամանակավոր կացության կարգավիճակը տրվում է մինչև 1 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ 1 տարով երկարաձգելու հնարավորությամբ:

Մշտական կացության կարգավիճակ տրվում է օտարերկրյա քաղաքացուն, եթե

- անձը ապացուցում է Հայաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականների (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայությունը, Հայաստանի Հանրապետությունում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն երեք տարի բնակվել է Հայաստանի Հանրապետությունում կամ
- ազգությամբ հայ է կամ Հայաստանի Հանրապետությունում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

Մշտական կացության կարգավիճակը տրվում է 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ նույն ժամկետով երկարաձգելու հնարավորությամբ:


Հատուկ կացության կարգավիճակ տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին: Հատուկ կացության կարգավիճակ կարող է տրվել նաև Հայաստանի Հանրապետությունում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների: Հատուկ կացության կարգավիճակը տրվում է տասը տարի ժամկետով: Այն կարող է տրվել մեկից ավելի անգամ:

2015-2017թթ. ընթացքում տարեկան 5.700 - 6.000 օտարերկրացիներ ՀՀ-ում տարբեր հիմքերով ստացել են կացության կարգավիճակներ: Դիտարկվող ժամանակահատվածում կացության կարգավիճակ ստացածների մեծամասնությունը՝ 68%-ը, ստացել է ժամանակավոր կացության կարգավիճակ: Մշտական կացության կարգավիճակ ստացածների մասնաբաժինը կազմել է մոտ 21,5%, համապատասխանաբար հատուկ կացության կարգավիճակ ստացածներինը՝ 10.5% (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 15):

ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրների տարբերվում է կախված կարգավիճակի տեսակից: Այսպես, 2017թ. ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների մեծամասնությունը եղել են Հնդկաստանի (930 անձ), Իրանի (906 անձ), Չինաստանի (299 անձ), Ռուսաստանի Դաշնության (255 անձ), Իրաքի (251 անձ) և ԱՄՆ-ի (218 անձ) քաղաքացիներ, իսկ մշտական կացության կարգավիճակ ստացածների մեծամասնությունը Ռուսաստանի Դաշնության (637 անձ), Իրանի (120 անձ), Վրաստանի (117 անձ), Ուկրաինայի (95 անձ) և Սիրիայի (85 անձ) քաղաքացիներ: Ինչ վերաբերում է հատուկ կացության կարգավիճակ ստացածների ծագման երկրներին, ապա այս դեպքում ամենամեծ թվով կարգավիճակները ստացել են Սիրիայի, Իրանի և ԱՄՆ-ի քաղաքացիները (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 15): Անհրաժեշտ է նշել, որ այս տարբերությունները ուղղակիորեն կապված են ՀՀ-ում օտարերկրացիների կացության նպատակների հետ: Օրինակ Հնդկաստանի քաղաքացիները ՀՀ ժամանում են հիմնականում ուսման և աշխատանքի նպատակով, ինչին համապատասխան կարող են ստանալ միայն ժամանակավոր կացության կարգավիճակ:

2017թ. վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում վավեր կացության կարգավիճակի հիմքով բնակվող օտարերկրացիների թիվը կազմել է 15,807 մարդ, ինչը կազմում է երկրի բնակչության 0.5%-ը: Նրանցից 3,919-ը կամ ընդհանուր թվի 24.8%-ը ունեցել են ժամանակավոր կացության կարգավիճակ, 5,766-ը կամ 36.5%-ը՝ մշտական կացության կարգավիճակ, իսկ 6,122-ը կամ 38.7%-ը հատուկ կացության կարգավիճակ: (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 8, 10, 12 և Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. 2015-2017թթ. վերջի դրությամբ վավեր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների թիվը (մարդ)՝ ըստ կացության տեսակների




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ:

ՀՀ-ում օտարերկրացիների ժամանակավոր կացությունը

Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը, դիտարկվող ժամանակահատվածում, գրանցել է շարունակական աճ՝ 3,847 անձ 2015 թ-ին, 4,017 անձ 2016թ.-ին և 4,177 անձ 2017թ-ին: (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 8):

2017թ. վերջի դրությամբ ՀՀ-ում վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների թվի բաշխումը ըստ քաղաքացիության երկրների ցույց է տալիս, որ նրանց մեծամասնությունը եղել են Հնդկաստանի (22,3%) և Իրանի (21,9%), Չինաստանի (7,5%), Ռուսաստանի Դաշնությունի (6,0%), ԱՄՆ-ի (5,5%) և Իրաքի (5,0%) քաղաքացիներ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 7 և Աղյուսակ 9)։

Գծապատկեր 7. 2015-2017թթ. տարեվերջի դրության վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը (%)՝ ըստ քաղաքացիության երկրների



Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ

2017թ. վերջի դրությամբ վավեր ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների ընդհանուր թվի 43,7%-ը այն ստացել է ուսման , 17,0%-ը՝ ընտանիքի վերամիավորման նպատակով, 1,2%-ը՝ ազգությամբ հայ լինելու հիմքով և 0,2%-ը՝ ձեռնարկատիպական գործունեություն ծավալելու նպատակով: Ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողները հիմնականում աշխատանքային տարիքի են՝ որոնց տեսակարար կշիռը ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողների ընդհանուր թվում 2015թ. կազմել է 93,9%, իսկ 2017թ. հասել է 95,3%-ի (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 8):

Անհրաժեշտ է նշել, որ 2017թ. ՀՀ-ում ուսում ստանալու հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների թիվը գրանցել է նախորդ տարվա համեմատ 15% աճ՝ կազմելով 1,8 հազար անձ:

Առկա վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016թ. և 2017թ. զգալիորեն աճել է նաև աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացած օտարերկրացիների թիվը՝ այսպես 2016թ. ՀՀ-ում աշխատանքի հիմքով ժամանակավոր կացության կարգավիճակ ստացել է 1,633 օտարերկրացի, ինչը 366-ով գերազանցում է նախորդ 2015թ. ցուցանիշը: 2017թ. ընթացքում այս հիմքով կարգավիճակ ստացել է 1,584 օտարերկրացի, ինչը, իհարկե զիջում է նախորդ տարվա ցուցանիշին, սակայն շարունակում է գերազանցել 2015թ. գրանցված արդյունքը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 8):

Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների մշտական կացությունը


2017թ. վերջին Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակի հիմքով բնակվող օտարերկրացիների թիվը կազմել է 5.766 մարդ:

Դիտարկվող ամբողջ ընթացքում մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը գրանցել է աճ՝ 2017թ. 11,7%-ով 2016թ. համեմատ, և 22,4%-ով 2015թ. համեմատ: Ինչպես և ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցողների պարագայում մշտական կացության կարգավիճակ ունեցող անձանց մեջ մեծամասնություն են կազմում աշխատունակ տարիքի օտարերկրյա քաղաքացիները, որոնց մասնաբաժինը 2017թ. կազմել է 79,6%, ինչը 1.2 տոկոսային կետով զիջել է 2016թ. ցուցանիշին (առավել մանրամասն տե՛ս աղյուսակ 10):

Ուսումնասիրվող ժամանակահատվածում զգալիորեն աճել է Հայաստանի Հանրապետությունում ազգությամբ հայ լինելու հիմքով մշտական կացության կարգավիճակ ստացած օտարերկրյա քաղաքացիների թիվը՝ այսպես 2015թ. այս հիմքով մշտական կացության կարգավիճակ ստացել էր 478 մարդ, իսկ արդեն 2017թ. այս ցուցանիշը հասել է 885-ի: Դիտարկվող ժամանակահատվածում մեծացել է նաև այս հիմքով կարգավիճակ ստացածների մասնաբաժինը մշտական կացության կարգավիճակ ստացածների ընդհանուր թվում՝ 2015թ.-ին այն կազմել է 40,3%, իսկ 2017թ.-ին հասել է 68,0%-ի:

Մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրների ցույց է տալիս, որ 2017թ.-ի դրությամբ ամենամեծաքանակ խումբը՝ 41,2%, կազմում են Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները, որոնց հետևում են Վրաստանի (9,7%), Իրանի (9,4%), Սիրիայի (8,9%), Ուկրաինայի (8,6%) և ԱՄՆ-ի (5,0%) քաղաքացիները: Այլ երկրների քաղաքացիները ներկայացված են 2,5% և ցածր միջակայքում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 8 և Աղյուսակ 11):

Գծապատկեր 8. 2015-2017 թթ. վավեր մշտական կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը՝ %-ով ըստ քաղաքացիության երկրների



Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ


Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների հատուկ կացությունը

2017թ. վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը կազմել է 6,122 անձ: Հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների թվի աճը նախորդ տարվա համեմատ 2017թ. կազմել է 88.5%, իսկ 2016թ. համեմատ՝ 79.5%-ի (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 12):

Հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թվում աշխատունակ տարիքի անձանց մասնաբաժինը կազմել է մոտ 84%՝ զրեթե պահպանվելով 2016 և 2015 թվականների մակարդակում (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 12):

Հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրյա քաղաքացիների բաշխումն ըստ քաղաքացիության երկրների ցույց է տալիս, որ 2017թ. մեծամասնություն են կազմում Իրանից (26.1%) և Սիրիայից (22.7%) ժամանածները, որոնց հաջորդում են ԱՄՆ-ի (15.3%) և Իրաքի (6.3%) քաղաքացիները: Այլ երկրները ներկայացված են 4.4 և ցածր միջակայքում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 9 և Աղյուսակ 13):

Գծապատկեր 9. 2015-2017 թթ. վավեր հատուկ կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացիների թիվը, ըստ քաղաքացիության երկրների, %




Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ:

Օտարերկրյա ուսանողները Հայաստանի Հանրապետությունում

Վերլուծված ժամանակահատվածում նկատվել է կրթություն ստանալու նպատակով Հայաստան ժամանող օտարերկրյա քաղաքացիների թվի աճ: 2017թ. նրանց

թիվը 2013թ. համեմատ աճել է 188-ով: Միննույն ժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանում ուսանող օտարերկրյա քաղաքացիների ամենամեծ թվաքանակը գրանցվել է 2015թ.-ին՝ 4,639 անձ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 10):

Գծապատկեր 10. 2013- 2017թթ. Հայաստանի Հանրապետությունում սովորող/ուսանող օտարերկրացիների թիվը (մարդ)



Աղբյուրը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 10-ում 2017թ. ՀՀ-ում ուսանել է 4,550 օտարերկրյա քաղաքացի, որոնց 85%-ը բարձրագույն կրթության I-ին աստիճան ստանալու, իսկ 15%-ն այլ մակարդակի կրթություն ստանալու նպատակով (8.5%-ը միջին մասնագիտական, 6.5%-ը II-րդ աստիճանի բարձրագույն կրթություն ստանալու համար): ՀՀ-ում ուսում ստանալու նպատակով ժամանող օտարերկրացիների մեծամասնությունը Վրաստանի (1,255 անձ), Ռուսաստանի Դաշնության (1,176 անձ) և Սիրիայի (359 անձ) քաղաքացիներ են (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 16): Հարկ է նշել որ դիտարկվող ժամանակահատվածում զգալի աճել է ուսման նպատակով Իրաքից ժամանողների թիվը՝ 2013թ. նրանց թիվը ընդամենը 4 էր, իսկ 2017թ. հասել է 84-ի:

Ա.2.4. Օտարերկրացիների կողմից Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացած օտարերկրացիների թիվը 2017 թվականին կազմել է 8.121 մարդ՝ ինչը կտրուկ անկում էր 2013թ. համեմատ (21,142): Վերլուծված ժամանակահատվածում աճի միտում է դրսևորել ՀՀ քաղաքացիություն դադարեցրածների թիվը՝ 2013 թ.-ի 1,110-ից 2017թ. հասնելով 4,733-ի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերում

Հայաստանի Հանրապետության քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման կարգը սահմանված է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքով (հասանելի՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131341>), իսկ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի N 1390-Ն որոշմամբ (հասանելի է <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=122107>):

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող է ստանալ ՀՀ քաղաքացիության չունեցող 18 տարին լրացած, գործունակ, օտարերկրյա պետությունում բնակվող (գտնվող) կամ ՀՀ-ում օրինական հիմքով բնակվող (գտնվող) յուրաքանչյուր անձ, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին 3 տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է ՀՀ Սահմանադրությանը, կարող է դիմել ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն ՀՀ քաղաքացիություն ստանալու համար, ինչպես նաև օտարերկրյա պետություններում ՀՀ դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ:

Պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին ՀՀ մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման ՀՀ քաղաքացիության կարող է ստանալ.

- այն անձը, որը մինչև ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը ներկայացնելու պահը վերջին 2 տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ է գտնվել ՀՀ քաղաքացու հետ և 2 տարվա ընթացքում առնվազն 365 օր օրինական բնակվել է Հայաստանում կամ ունի ՀՀ քաղաքացի երեխա, կամ

- այն անձը, որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է ՀՀ քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանում, և որը 18 տարին լրանալուց հետո՝ 3 տարվա ընթացքում, դիմել է ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:

- այն անձը, որը Հայաստանի Հանրապետությունում ճանաչվել է փախստական կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում բնակվող՝ քաղաքացիություն չունեցող անձ

Անձը ՀՀ քաղաքացիությունը կորցնում է քաղաքացիության դադարեցման հետևանքով: «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 27 ՀՀ քաղաքացիությունը դադարեցվում է միայն ՀՀ նախագահի հրամանագրով: Տվյալ դեպքում քաղաքացին քաղաքացիության դադարեցման մասին դիմումն անձամբ ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում՝ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն, իսկ օտարերկրյա պետությունում՝ ՀՀ դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ:

Ա.2.5. Միջազգային պաշտպանության տրամադրում

Միջազգային պաշտպանության տրամադրման ոլորտում ՀՀ կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը միտված է ապաստան հայցողների և փախստականների իրավունքների վերաբերյալ ազգային օրենսդրության ներդաշնակեցմանը միջազգային, մասնավորապես, եվրոպական չափանիշներին՝ ելնելով Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններից:

1993թ. Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց միանալ 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին Ժնևի կոնվենցիային և 1967 թ. Արձանագրությանը: Այդ փաստաթղթերի հիման վրա 1999 թվականին մշակվեց և ընդունվեց «Փախստականների մասին» ՀՀ օրենքը, որով ամրագրվեց փախստականի կարգավիճակը և ապաստանի տրամադրման կարգը:


2008թ. ընդունվեց նոր և բարեփոխված «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենքը, որի արդյունավետ կիրարկումն ապահովելու համար 2009-2010թթ. ընթացքում ՀՀ կառավարությունը ընդունեց ութ որոշումներ: Նույն ընթացքում Միգրացիոն պետական ծառայությունը ընդունեց ապաստան հայցողների բնակության կարգը ժամանակավոր տեղավորման կենտրոնում կարգավորող երեք գերատեսչական նորմատիվ ակտ, ապաստանի համակարգի շահառուների անձը հաստատող փաստաթղթերի ձևանմուշները հաստատող և փաստաթղթերի տրամադրման գործընթացը կարգավորող նորմեր: 2013-2014 թվականներին ընդունվել են 10 ներքին ստանդարտ ընթացակարգ (SOP):

Օտարերկրացիների միջազգային պաշտպանության տրամադրումը Հայաստանում իրականացվում է միջազգային նորմերով սահմանված դրույթների, ինչպես նաև այդ նորմերը ներառող ազգային օրենսդրության հիման վրա: Անցած տարիների ընթացքում միջազգային և մասնավորապես եվրոպական չափանիշներին են մոտարկվել ոչ միայն ապաստանի տրամադրումը կարգավորող օրենսդրական ակտերը և ընթացակարգերը, այլ նաև ապաստանի տրամադրման համակարգը բնութագրող վիճակագրական տվյալների հավաքագրման, մշակման և հրապարակման գործընթացները: Այդպես սկսած 2014 թ-ից միջազգային պաշտպանության որոնող անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները սկսեցին ստացվել նոր, միջազգային չափորոշիչներին համապատասխանող, հաշվառման համակարգի միջոցով: Սրանով պայմանավորված սույն վերլուծական զեկույցում ապաստանի վերաբերյալ վիճակագրության մեջ 2013թ. վերաբերյալ տվյալները բացակայում են:

Նոր համակարգի ներդրումից հետո ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ 2014-2017թթ. Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցող անձանց թիվն ունեցել է նվազման միտում: 2014թ. ՀՀ-ում ապաստան է հայցել 226 անձ, ինչը 1,5 անգամ գերազանցել է 2017թ. ցուցանիշը՝ 91 անձ: Դիտարկվող ժամանակահատվածի համար ամենամեծ թվով ապաստանի հայց՝ 166 դիմում 316 անձի վերաբերյալ, գրանցվել է 2015թ.:

2014-2017թթ. ընթացքում ՀՀ-ում ապաստան հայցած անձանց համամասնությունը ըստ ծագման երկրների տարեց տարի փոփոխվել է: Այդպես 2014թ. ամենամեծ թվով ապաստան հայցողները՝ ընդհանուր թվի կեսից ավելին, Ուկրաինայից էին, ինչը պայմանավորված էր այդ երկրում սկիզբ առած ռազմական հակամարտությամբ: Երկրորդ մեծաքանակ խումբը կազմում էին Սիրայի Արաբական Հանրապետության (22,1%) քաղաքացիները, որոնց հաջորդում էին Իրանի(11,9%) և Իրաքի (8,4 %) քաղաքացիները: Վերջին 2 տարվա՝ 2016թ. և 2017թ., ընթացքում տեղի ունեցավ միտումների փոփոխություն. հակամարտության մասնակի կարգավորման արդյունքում Ուկրաինայից ժամանող ապաստան հայցողների թիվը կրճատվեց և կազմեց ընդամենը 10 անձ: Այս տարիներին ամենամեծաթիվ խումբը կազմել են Սիրայի, ապա՝ Իրանի և Իրաքի քաղաքացիները (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 11 և Աղյուսակ 19):

Գծապատկեր 11. 2014-2017թթ. ՀՀ-ում ապաստան հայցողների թիվը ըստ երկրների



Աղբյուր՝ ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ

Վերլուծված ժամանակահատվածում ՀՀ-ում ապաստան հայցածների թվում դիտվել է զգալի սեռային ճեղքվածք՝ 2014-2017թթ. ընթացքում ՀՀ-ում ապաստան հայցած անձանցի թվում կանանց մասնաբաժինը կազմել է տարեկան միջինը 45.8%: Ի դեպ, այս ցուցանիշի ամենացածր մակարդակը գրանցվել է 2017թ.՝ 43.7%:

2014-2017թթ. ընթացքում ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության կողմից ընդունված դրական որոշումների արդյունքում ՀՀ-ում փախստականի կարգավիճակ է ստացել 474 անձ, ճանաչման գործակցի⁹ տարեկան միջին նշանակությունը դիտարկվող ժամանակահատվածի համար կազմել է 0.57: Նույն ժամանակահատվածում ապաստանի հայցի մերժում են ստացել 109 անձ: Մերժման հիմնական պատճառները եղել են դիմումների անհամապատասխանությունը միջազգային պաշտպանության տրամադրման վերաբերյալ իրավական դրույթներին, ինչպես նաև ապաստան հայցողների ծագման երկրներում տիրող իրավիճակը:

Քաղաքացիություն չունեցող անձիք

ՀՀ ընդլայնված միգրացիոն պրոֆիլի ցուցանիշների հավաքագրման արդյունքում ստացված վիճակագրական տվյալների համաձայն ՀՀ-ում 2017թ. 349 անձ ստացել է քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ, ինչը 2 անգամ գերազանցում է 2016թ. ցուցանիշը և 16.6 անգամ՝ 2013թ. ցուցանիշը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 18):

⁹ Փախստականի կարգավիճակ ստացած անձանց թվի հարաբերությունը այն անձանց թվին, որոնց վերաբերյալ կայացվել են որոշումներ:

Ընդհանուր առմամբ, 2013-2017 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ է ստացել 647 անձ:

Ա.2.6. Անօրինական իմիգրացիա

Անօրինական իմիգրացիան որպես զանգվածային երևույթ ՀՀ-ում բացակայում է. Հայաստան մուտք գործելը որպես կանոն օրինական է: Եթե նույնիսկ կան խախտումներ, ապա դրանք վերաբերում են ՀՀ-ում գտնվելու իրավական նորմերին:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տվյալներով 2017թ. երկրում անօրինական գտնվելու համար վարչական պատասխանատվության է ենթարկվել 3,222 օտարերկրացի, ինչը 1,160-ով ավելի է քան 2014թ. ցուցանիշը: Քրեական պատասխանատվության է ենթարկվել 161 օտարերկրացի:

2017թ. 134 օտարերկրացու՝ Հայաստանում օրինական գտնվելու հիմք ձեռքբերելու դիմումներ մերժվել է, ինչը 10%-ով գերազանցել է 2013թ. ցուցանիշը՝ 124 անձ: Նույն 2017թ. Հայաստանում գտնվելու իրավունքից զրկված օտարերկրացիների թիվը կազմել է 178 անձ: Անհրաժեշտ է նշել, որ այս ցուցանիշի առավելագույն նշանակությունը գրանցվել է 2013թ.՝ 1,102 անձ:

Վերլուծվող ժամանակահատվածում զգալիորեն աճել է ՀՀ տարածքում անցանկալի ճանաչված անձանց թիվը. 2013թ. նրանց թիվը կազմում էր 28, իսկ արդեն 2017թ.՝ 1,410: Անցանկալի ճանաչված օտարերկրացիների մեծ մասը հասարակական կարգի և ազգային անվտանգության սպառնալիք են ներկայացրել: Միևնույն ժամանակ 2014-2017թթ. ժամանակահատվածում Հայաստանից արտաքսվել է ընդամենը 6 օտարերկրացի:

Միգրացիոն գործընթացների կարգավորման և անօրինական միգրացիայի հակազդման միջոցառումների օրենսդրական կարգավորումների մշակման ժամանակ հաշվի են առնվում միջազգային իրավական փաստաթղթերում առկա նորմերը և սկզբունքները: Մասնավորապես 2014թ. ընդունվել է ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին օրենքը, որի համաձայն անօրինական միգրացիայի կազմակերպումը դասակարգվել է որպես քրեական հանցագործություն: 2014թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ է մտել 2015թ. հունիսի 17-ին:

Յուրաքանչյուր տարի ՀՀ ոստիկանությունն իրականացնում է օպերատիվ-կանխարգելիչ «Նելեգալ» միջոցառումը, որն ուղղված է ինչպես երրորդ երկրի քաղաքացիների անօրինական միգրացիայի կանխարգելմանը, այնպես էլ մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին: 2014թ. ընթացքում ՀՀ ոստիկանությունը հարուցել է անօրինական միգրացիայի հետ կապված 20 քրեական գործեր:

Ա.3. ԷՄԻԳՐԱՑԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Ա.3.1. Էմիգրացիոն հոսքերի ծավալները, նշանակակետ երկրները

Հայաստանի Հանրապետությունից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերը նկարագրող պաշտոնական տվյալները ներկայացվում են վիճակագրական կոմիտեի կողմից, սակայն տվյալ վիճակագրությունն արտացոլում է միայն մեկնելու փաստը պաշտոնապես գրանցած ՀՀ քաղաքացիների վերաբերյալ տվյալները: Միննույն ժամանակ, այլ ստույգ տվյալների բացակայության պայմաններում ԸՄՊ-ի այս մասում էմիգրացիայի վերլուծությունն իրականացվել է վարչական վիճակագրության տվյալների հիման վրա: Որոշ դեպքերում վերլուծության համար հիմք են ծառայել նաև միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ ՓԳՀ, ՄՄԿ, ՄԶԶՄԿ, կողմից հավաքագրված և հրապարակված տվյալները:

Անկախություն ձեռքբերելուց հետո տեղի ունեցած գործընթացների արդյունքում Հայաստանը դարձավ միգրանտների ծագման երկիր: Դրան նպաստեցին նաև դարերով զանազան պատմական անցքերի արդյունքում ձևավորված խորը միգրացիոն ավանդույթները, ինչպես նաև դրանց հետևանքով արտերկրում ձևավորված մեծ և լավ կազմակերպված սփյուռքի առկայությունը: Համաձայն որոշ գնահատականների, վերջին տասնհինգ տարիների ընթացքում ՀՀ բնակչության առնվազն 35 տոկոսն արտագաղթել է Հայաստանից, և հոսքը դեռևս լայն տարածում ունի¹⁰:

Դիտարկվող տարիներին Էմիգրացիային նպաստող գործոնների շարքում գրեթե բոլոր հետազոտություններում նշվում են գործազրկության բարձր մակարդակով և ցածր վարձատրվող աշխատանքով պայմանավորված տնտեսական վիճակը, քաղաքական անկայունությունը՝ այդ թվում պատերազմի վերսկսման հնարավորությունը, սոցիալական ոլորտի և հասարակական կապերի թերգնահատումը, ինչպես նաև բարենպաստ ներդրումային միջավայրի բացակայությունը¹¹: ՀՀ քաղաքացիների՝ դեպի սոցիալ-տնտեսական ավելի բարձր մակարդակ ունեցող երկրներ էմիգրացիայի որոշման ընդունման վրա կարևոր ազդեցություն ունեն արդեն իսկ արտերկրում գտնվող իրենց հարազատների հետ պահպանվող ամուր կապերը և բնականաբար այդ հարազատների միգրացիոն փորձը:

ՀՀ-ից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերի մեջ առաջնային դեր և նշանակություն ունի աշխատանքային միգրացիան, որը կազմում է էմիգրացիոն հոսքի մեծամասնությունը: Աշխատանքային միգրանտների հիմնական նպատակակետ երկրներն են Ռուսաստանի Դաշնությունը և ԱՊՀ որոշ երկրներ, մասնավորապես՝ Ուկրաինան, Բելառուսը և Ղազախստանը: Այս հոսքի մեծածավալությանը նպաստում են Հայաստանի և ԱՊՀ երկրների միջև ազատ վիզային ռեժիմի առկայությունը և տրանսպորտային ծախսերի ավելի ցածր մակարդակը՝ հատկապես եվրոպական երկրների համեմատ: Մեծ կարևորություն ունեն նաև ռուսաց լեզվի իմացությունը և ընդհանուր խորհրդային անցյալի ընթացքում ձևավորված մշակութային նմանությունները, որոնք Ռուսաստանը և ԱՊՀ այլ երկրները միգրանտների համար

¹⁰<https://publications.iom.int/books/review-and-needs-assessment-readmission-management-armenia>

¹¹<https://www.pragueprocess.eu/ru/migration-observatory/migration-profile-light>

դարձնում են ավելի գրավիչ: Պակաս կարևորություն չունի նաև մոբիլության հարցը՝ Ռուսաստանի Դաշնություն (և հատկապես Մոսկվա) և ԱՊՀ այլ երկրներ մեկնող ՀՀ քաղաքացի միգրանտները, կարող են ավելի ազատ տեղաշարժվել և ցանկության դեպքում բազմակի անգամ վերադառնալ հայրենիքի տաբերություն Եվրոպա և Ամերիկա մեկնողների:


ՀՀ-ից սկիզբ առնող էմիգրացիոն հոսքերի մյուս կարևոր ուղղությունը Եվրոպական է և հատկապես ԵՄ անդամ երկրները, իսկ այս հոսքի գլխավոր առանձնահատկությունը կայանում է նրանում, որ մեկնողների մեծամասնությունը իսկզբանե մեկնում է մշտական բնակության նպատակով: Դեպի ԵՄ մշտական բնակության մեկնող ՀՀ քաղաքացիների շրջանում ամենատարածված միջոցը ԵՄ մուտք գործելուց հետո օրինական գտնվելու ժամկետը (մուտքի վիզայի) սպառվելուց հետո ապաստան հայցելն է, ինչը թույլ է տալիս ոչ միայն որոշ ժամանակով օրինականացնել իրենց գտնվելը այլ նաև ընդունող երկրում օգտվել սոցիալական աջակցության ծառայություններից: Շատ դեպքերում այդ անձանց ապաստանի դիմումները մերժվում են և նրանք ընդունող երկրներում դառնում են անօրինական միգրանտներ, արդյունքում՝ վերադաձվում Հայաստան:

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող տնային տնտեսությունների հետազոտությունների տվյալների 2014-2017թթ. իրենց մշտական բնակավայրից բացակայած՝ մեկնած և 2017թ. դրությամբ դեռևս չվերադարձած տ/տ 15 և բարձր տարիքի անդամների 30.8%-ի բացակայության տևողությունը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ կազմել է՝ 3 ամիս և պակաս, 51.3%-ինը՝ 4-12 ամիս, իսկ 17.9%- ինը՝ մեկ տարի և ավելի: Բացակայածների 70.6%-ը գտնվել են արտերկրներում, այդ թվում, գերակշիռ մեծամասնությունը՝ Ռուսաստանի Դաշնությունում: Արտերկրում գտնվելու պատճառով բացակայած անդամների 70%-ի ՀՀ-ից բացակայելու տևողությունը կազմել է 3-12 ամիս, իսկ 30%-ինը՝ մեկ տարի և ավելի:

2017թ. էմիգրացիայի տարեկան ծավալը կազմել է 33.2 հազար մարդ, ինչը կազմում է 2013թ. ցուցանիշի մոտ 90%-ը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 21):

2017թ. արտերկրում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը (ըստ բնակչության պետական ռեգիստրի տվյալների) կազմել է 8.710 մարդ, ինչը 22%-ով զիջում էր 2013թ. ցուցանիշին (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 21): Հաշվառվածների թվում սեռային համամասնությունը կազմում էր 52,2% կին և 47,8% տղամարդ: 2013թ. համեմատ, երբ համամասնությունը համապատասխանաբար 56,5% և 43,5% էր, տեղի է ունեցել սեռային բաշխվածության հավասարակշռում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 12)։


Գծապատկեր 12. 2013-2017 թթ. Օտարերկրյա պետություններում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը ըստ սեռի (%)



Աղբյուր՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Արտերկրում հաշվառված ՀՀ քաղաքացիների թվի բաշխումը՝ ըստ տարիքային խմբերի, ցույց է տալիս, որ 2013-2017թթ. ընթացքում նրանց թվում մեծամասնություն են կազմել երիտասարդ և աշխատունակ տարիքի անձինք, որոնց մասնաբաժինը 2017թ. կազմում էր 62.8%՝ և գրանցել էր 7 տոկոսային կետով աճ 2013թ. համեմատ (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 22): Վերլուծվող ժամանակահատվածում գրեթե կրկնակի աճել էր մինչև 24 տարեկանների քանակը, իսկ ընդհանուր թվի նվազումը պայմանավորված է եղել այլ տարիքային խմբերի թվի աննշան, բայց կայուն նվազմամբ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 13 և Աղյուսակ 23):

Գծապատկեր 13. 2013-2017 թթ. Օտարերկրյա պետություններում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը ըստ տարիքի




Աղբյուր՝ ՀՀ բնակչության պետական ռեգիստր

Արտերկրում հաշվառված ՀՀ քաղաքացիների բաշխվածությունը ըստ երկրների ցույց է տալիս, որ 2017թ. նրանց մեծամասնությունը բնակվել է Վրաստանում՝ ընդհանուր թվի 28.3%-ը (2013թ.-ին՝ 10.5%), որին հետևում են Լիաբանանը՝ 17.5% (2013թ.-ին՝ 25,2%), Սիրիան՝ 11.6% (2013թ.-ին՝ 24.3%) և Ռուսաստանի Դաշնությունը՝ 10.9% (2013թ.-ին՝ 16,2%) (առավել մանրամասն տե՛ս Գծապատկերներ 14 Ա և 14Բ, Աղյուսակ 23):

Գծապատկեր 14. 2013-2017 թթ. Օտարերկրյա պետություններում հաշվառված ՀՀ քաղաքացիների թիվը ըստ բնակության երկրների (%)

Ա) 2013 թվականին


Բ) 2017 թվականին



Աղբյուր՝ Բնակչության պետական ռեգիստրի տվյալներ

Կրթության ոլորտում կնքված միջազգային պայմանագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում սովորող ՀՀ քաղաքացիների թիվը վերլուծվող ժամանակահատվածում դրսևորել է անկայուն միտում: Ճիշտ է, 2013թ. համեմատ 2017թ. գրանցվել է աննշան աճ՝ 196-ից հասելով 205-ի: Սակայն 2015-2016թթ. այս թիվը եղել է շատ փոքր՝ 33 և 48 անձ համապատասխանաբար, ինչը պայմանավորված էր ՀՀ կրթության և գիտության նախարարության և ՌԴ կրթության նախարարության միջև համապատասխան պայմանագրեր կնքված չլինելու հանգամանքով: Անհրաժեշտ է նշել, որ միջազգային պայմանագրերի հիման վրա արտերկիր ուսման նպատակով մեկնող ՀՀ քաղաքացիների հիմնական նշանակակետ պետությունը ՌԴ-ն է՝ ընդհանուր թվի մոտ 76%-ը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 15 և Աղյուսակ 24):


Գծապատկեր 15. 2013-2017 թթ. միջազգային համաձայնագրերի հիման վրա օտարերկրյա պետություններում սովորող ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրների



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

2017թ. վերջի դրությամբ ԵՄ անդամ պետություններում վավեր կացության կարգավիճակ ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը կազմել է ավելի քան 63 հազար մարդ, ինչը 8,1 հազարով ավելի է, քան 2013թ. ցուցանիշը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 25): ԵՄ-ում տարեվերջի դրությամբ վավեր կացության կարգավիճակ ունեցողների թվի ըստ բնակության երկրների վերլուծության հիման վրա կարելի է առանձնացնել 4 հիմնական նշանակակետ պետություններ՝ Ֆրանսիա (23.5%), Գերմանիա (18.4%), Իսպանիա (15.8%) և Հունաստան (10.2%): Անհրաժեշտ է նշել, որ ԵՄ անդամ պետություններում կացության կարգավիճակ ունեցող ՀՀ քաղաքացիների թիվը դիտարկվող տարիներին պահպանել է աճի միտում՝ նախորդ տարվա համեմատ տարեկան միջինը 4% (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 16 և Աղյուսակ 25):

Գծապատկեր 16. 2013-2017թթ. ԵՄ-ում կացության կարգավիճակ ունեցող ՀՀ քաղաքացիների կառուցվածքը ըստ բնակության հիմնական երկրների



Աղբյուր՝ Եվրոստատի տվյալների շտեմարան

Մարդկանց թրաֆիքինգ

Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելումը և դրա դեմ պայքարը հանդիսանում է ՀՀ պետական քաղաքականության առաջնահերթություններից մեկը: Այս ուղղությամբ վերջին տարիներին ՀՀ կողմից վավերացվել են մի շարք միջազգային փաստաթղթեր, և այդ ոլորտում իրավիճակը շտկելու համար ընդունվել են մի շարք օրենսդրական, նորմատիվ և ռազմավարական փաստաթղթեր:

Քանի որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում գործող մարդկանց թրաֆիքինգի և շահագործման զոհերի նույնացման հանձնաժողովը ձևավորվել է 2015թ. հանձնաժողովի գործունեության արդյունքները արտացոլող վիճակագրական տվյալները հասանելի են սկսած 2016թ.:

2016թ. հանձնաժողովի կողմից նույնականացվել է 18 անձ, որոնցից 16-ը տղամարդ 2-ը կին: Այս անձանց մեծամասնությունը՝ 16-ը, շահագործման ենթարկվել են ՌԴ-ում: 2017թ. նույնականացված անձանց թվում գերակշռում էին կանայք՝ 13 դեպքից 10-ը, իսկ շահագործման ենթարկվելու հիմնական երկիրը ՀՀ-ն էր (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 26)

Ա.3.2. Էմիգրանտների սոցիալ-ժողովրդագրական կազմը

Համաձայն ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների 2014-2017թթ. միգրացիոն գործընթացներում ներգրավված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների միգրացիայի հիմնական նպատակը աշխատանքն է, իսկ հիմնական նպատակակետ պետությունը՝ ընդհանուր թվի 91,8% դեպքում, Ռուսաստանի Դաշնությունը: ԱՊՀ անդամ այլ պետությունների մասնաբաժինը կազմում է 1,5%, իսկ Եվրոպական երկրներինը՝ 1,1%:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտության արդյունքների համաձայն ՀՀ-ից հիմնականում մեկնում են միջին և ցածր նյաթական ապահովված տնային տնտեսություններից (94%): Միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում ըստ դրանց ստացման աղբյուրների ընդհանուր եկամուտների 35%-ը արտերկրում աշխատող ընտանիքի անդամների փոխանցումներն են:

Ա.3.3. Էմիգրացիայի դրդապատճառները

ՀՀ քաղաքացիների արտաքին միգրացիայի վերաբերյալ տարբեր հարցումների համաձայն էմիգրանտների մեծամասնությունը նշում է, որ իրենց արտագաղթի հիմնական պատճառը հայրենիքում աշխատանքի բացակայությունն է: Մնացածները որպես էմիգրացիայի պատճառ նշել են կենսամակարդակի ապահովման համար բավարար հնարավորությունների բացակայությունը, այլ պատճառների շարքում նշել են երկրի/բնակավայրի զարգացման հեռանկարի բացակայությունը և ընտանեկան հանգամանքները / վերամիավորում ընտանիքի հետ, ամուսնություն և այլն:

Վիճակագրական կոմիտեի տվյալների համաձայն 2014-2017թթ. արտերկիր մեկնած և 2017թ. դրությամբ դեռևս չվերադարձած միգրանտների բաշխումն ըստ դրդապատճառների ցույց է տալիս, որ ՀՀ քաղաքացիների 64,3%-ը մեկնել է աշխատանքի


նպատակով, նրանց հիմնական մասնաբաժինը՝ սեզոնային և կարճաժամկետ աշխատանքի՝ մինչև 1 տարի, իսկ 26,1 %-ը՝ 1 տարուց ավելի՝ երկարաժամկետ աշխատանքի: Ընտանեկան հանգամանքերով մեկնաձների մասնաբաժինը կազմել է ընդհանուր թվի 3,3%-ը, մշտական բնակության մեկնողներինը՝ 3,5%-ը իսկ ուսանելու նպատակով՝ 8,5%-ը:

Ա.3.4. Արտերկրում ապաստանի հայց ներկայացրած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները

ՄԱԿ ՓԳՀ-ի տվյալներով 2013-2017թթ-ի ընթացքում արտերկրում ապաստան հայցող ՀՀ քաղաքացիների թիվը աճել է՝ 2017թ. հասնելով 7.788-ի: 2013թ. համեմատ այս ցուցանիշի աճի միտումը կազմել է 159,2% (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 27): 2017թ. ՀՀ քաղաքացիների կողմից ներկայացված ապաստանի դիմումների թվի աճ գրանցվել է Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Իտալիայում, Չեխիայում, Իսպանիայում և Նիդերլանդներում (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 29):

ՄԱԿ ՓԳՀ տվյալներով 2013-2017թթ. աշխարհի տարբեր երկրներում ՀՀ քաղաքացիները ներկայացրել են գումարային մոտ 31,200 դիմում: ՀՀ քաղաքացի ապաստան հայցողների հիմնական նպատակակետ երկիրը եղել է Գերմանիան, որտեղ ներկայացվել է 13,878 ապաստանի դիմում, երկրորդ տարածված ուղղությունը Ֆրանսիան է (8,057 դիմում), որին հետևում են ԱՄՆ-ն (2,001 դիմում) և Ավստրիան (1225 դիմում) (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 17):

Գծանկար 17. 2013-2017 թթ. ընթացքում օտարերկրյա պետություններում ապաստան հայցած ՀՀ քաղաքացիների թիվը ըստ երկրների




Աղբյուր՝ ՄԱԿ ՓԳՀ Բնակչության վիճակագրություն տվյալների շտեմարան

Ա.3.5. Ռեադմիսիա

Ռեադմիսիոն համաձայնագրերի արդյունավետ կիրարկումն ապահովող համակարգի առկայությունը միգրացիայի կառավարման կարևոր բաղադրիչներից մեկն է: Հայաստանի քաղաքացիների ռեադմիսիան/հետընդունումը/ իրականացվում է ԵՄ-ի և ՀՀ-ի միջև 2013թ.-ին կնքված անօրինական գտնվող անձանց ռեադմիսիայի /հետ ընդունման/ , ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության հետ 2011թ. կնքված համաձայնագրերի համաձայն:

Այս համաձայնագրերի կնքումը նպաստել է գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը: Հաշվետու ժամանակահատվածում ռեադմիսիայի մասին համաձայնագրերի կիրարկման շրջանակներում հաստատվել է 2,200-ից ավելի անձանց ՀՀ քաղաքացիությունը (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 30 և Գծապատկեր 18):

Գծապատկեր 18. 2013-2017թթ. ընցաքում ռեադմիսիայի շրջանակներում ՀՀ քաղաքացիությունը հաստատված անձանց թիվը (մարդ)



Աղբյուր: ՀՀ ՏԿԵՆ միգրացիոն ծառայության հրապարակումներ

2017թ. ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացված հայցադիմումների թվի կտրուկ աճը պայմանավորված էր ԵՄ երկրների՝ մասնավորապես Գերմանիայի՝ անօրինական միգրանտների նկատմամբ քաղաքականության խստացմամբ:

Ռեադմիսիոն համաձայնագրերի կիրարկումը ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունն ընդունել է մի շարք որոշումներ, որոնք սահմանում են ՀՀ պետական մարմինների կողմից ռեադմիսիոն համաձայնագրերի շրջանակներում ստացված հայցերի քննարկման կարգը և ժամկետները: Օրինակ, Համաձայնագրով ստանձնած հանձնառությունների կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու և ծագող խնդիրները քննարկելու նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ: :

2014թ. ավարտին *ՄՄԳ-ի հայաստանյան գրասենյակը հրապարակեց երկու ուսումնական ձեռնարկ* ¹⁵. Առաջինը տեղեկագիր է և պարունակում է ռեադմիսիայի վերաբերյալ ուսումնական նյութեր, որը նախատեսված է ռեադմիսիայի գործընթացում ներգրավված պաշտոնյաների համար, իսկ երկրորդը միջազային փորձագետների կողմից մշակված ռեադմիսիայի վերաբերյալ ձեռնարկ է

2013թ. ստորագրված և 2014 թ. հունվարին ուժի մեջ մտած ՀՀ և ԵՄ միջև կնքված ռեադմիսիայի մասին համաձայնագրի արդյունավետ իրականացման նպատակով դիտարկվող ժամանակահատվածում սկսվել է համապատասխան արձանագրությունների մշակման և ստորագրման գործընթացը: 2016թ.-ին կիրարկման արձանագրություն է ստորագրվել Էֆրանսիայի, իսկ 2017թ.-ին Էստոնիայ հետ :

ՀՀ և ԵՄ միջև կնքված ռեադմիսիայի մասին համաձայնագրի 19-րդ հոդվածի համաձայն, ձեռքբերված պայամանվորվածությունների իրականացման նպատակով ստեղծվել է ԵՄ-ՀՀ հետընդունման հարցերով համատեղ կոմիտե, որը 2013-2017թթ-ին անցկացրել է 4 նիստ:

2013-2017թթ. ընթացքում ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը, որը ռեադմիսիոն հայցերի համար ՀՀ կողմից իրավասու մարմինն է, ընդհանուր առմամբ ստացել է 1.446 հայց 2.812 անձի ռեադմիսիայի վերաբերյալ, որոնցից 2.223 –ի քաղաքացիությունը հաստատվել է: Ընդ որում հայցերից 908-ը 1.782 անձի վերաբերյալ, ստացվել է 2017թ. ընթացքում, դրանցից 1.391 անձի քաղաքացիությունը հաստատվել է: Ըստ երկրների բաշխվածությունը ցույց է տալիս, որ մեծամասնությունը վերադարձվել է Գերմանիայից (57,6%), Ավստրիայից և Նիդերլանդներից, համապատասխանաբար՝ 12,1% և 10,2%, ԵՄ այլ երկրներից 7%-ից պակաս (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 31):

Ա.3.6. Բնտեգրում և վերաինտեգրում

Օտարերկրյա պետություններից ՀՀ վերադարձող Հայաստանի քաղաքացիների վերաինտեգրման աջակցությունը «Հայաստանից անկանոն միգրացիայի ուսումնասիրման և կանխարգելման հայեցակարգի» առաջնահերթություններից մեկն է: Հայեցակարգը սահմանում է վերադարձից հետո վերաինտեգրման կոնկրետ քայլեր՝ վերաինտեգրման ուղղված զբաղվածության ծրագրեր, վերադարձողների համար խորհրդատվական ծառայություններ: Հայաստան վերադարձողներին վերաինտեգրման աջակցության կազմակերպում ընդունող երկրների աջակցությամբ:

2012-2016թթ. «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի» իրականացմանն ուղղված գործողությունների ծրագրով սահմանված են. մի շարք միջոցառումների իրականացում որոնք ուղղված են վերադարձողների վերաինտեգրման խթանմանը

Այդ ծրագրի շրջանակներում, ՀՀ քաղաքացիների վերադարձին աջակցելու նպատակով 2014թ. սեպտեմբերին ՀՀ կառավարությունը հավանություն տվեց <http://www.tundarc.am>: ինտերնետային տեղեկատվական համակարգի ստեղծմանը: Տվյալ համակարգը հնարավորություն է ընձեռում ստանալ վերադարձի և վերաինտեգրման, այդ ոլորտում իրականացվող ծրագրերի վերաբերյալ օգտակար տեղեկատվություն, ինչպես նաև առցանց ռեժիմով դիմել պետական մարմիններին կոնկրետ հարցերով, խնդիրներով և առաջարկություններով:

«Բնակչության զբաղվածության մասին» ՀՀ օրենքի համաձայն, վերադարձող միգրանտները հնարավորություն ունեն ծանոթանալու զբաղվածության կարգավորմանն ուղղված 13 պետական ծրագրերին:

ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 17-ի «Աշխատաշուկայում անմրցունակ գործազուրկների նույնականացման որոշման ընթացակարգերի մասին» թիվ 534 որոշման հավելված 14-ի կետ 5-ի 18-րդ ենթակետի համաձայն՝ գործազուրկների

անմրցունակ լինելու վերաբերյալ որշման համար հիմք կարող են հանդիսանալ նաև հետևյալ չափանիշները.

ա) անձը վերադարձել է արտերկրից, սակայն վերադառնալուց հետո մեկ տարվա ընթացքում չի կարողացել դառնալ զբաղված,

բ) վերջին երեք տարվա ընթացքում մեկից ավելի անգամ մեկնել է արտերկիր և յուրաքանչյուր անգամ մեկնման երկրում բնակվել է մեկ ամսվանից ավելի,

գ) վերջին երեք տարվա ընթացքում մեկ տարվանից ավելի բնակվել է արտերկրում¹²:

Աշխատանք փնտրողները կարող են գրանցվել որպես գործազուրկ և ներգրավվել տարեկան պետական աջակցության ծրագրերում: Վերադարձած քաղաքացիները, որոնք համապատասխանում են վերը նշված պայմաններին և համարվում են աշխատանքի շուկայում անմրցունակ անձինք ևս կարող են օգտվել հասարակական զբաղվածության ծրագրերից:

Հայաստանի և ԵՄ միջև Շարժունակության գործընկերության առաջին համատեղ ծրագիր շրջանակներում (ստորագրվել է 2011 թ. հոկտեմբերի 27-ին) իրականացվող «Հայաստանում միգրացիոն ներուժը, հատուկ ուշադրություն դարձնելով վերաինտեգրմանը» ծրագրի շրջանակներում 2014թ-ին Միգրացիոն ծառայությունում ստեղծվեց վերաինտեգրման խորհրդատվական կենտրոն, որը գործում էր «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով, ինչը հնարավորություն էր ընձեռում ՀՀ վերադարձողներին տեղեկանալ վերաինտեգրման հնարավորությունների մասին և, կախված իրավիճակից նրանք ուղղորդվում էին համապատասխան ծառայություններ: Կենտրոնը սերտորեն համագործակցում էր պետական մարմինների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, որոնք աջակցում էին վերաինտեգրման գործընթացին:

Պայմանավորված նրանով, որ 1992-ից ի վեր Հայաստանի համար արտաքին միգրացիոն հոսքերում գերակշռել են էմիգրացիոն հոսքերը, վերջին 20-25 տարիներին իմիգրանտների ինտեգրման խնդիրը մեր երկրում չէր դարձել քաղաքական-կառավարչական օրակարգի խնդիր և չէր մշակվել իմիգրանտների ինտեգրման հատուկ քաղաքականության հայեցակարգային որևէ փաստաթուղթ:

Այնուհանդերձ նշված ժամանակաշրջանում Հայաստանը դիմագրավել է նաև հսկայածավալ իմիգրացիոն հոսքերի՝ հանձինս 1988-92թթ. Ադրբեջանից բռնագաղթված փախստականների և վերջին 10-12 տարիներին նաև տարբեր երկրներից Հայաստան եկած բավականաչափ մեծ թվով հարկադիր իմիգրանտների: Սկսած 1999 թվականինց մինչ 2017թ.-ը ներառյալ ՀՀ-ում ապաստան է հայցել ավելի քան 3.500 օտարերկրացի և փախստական ճանաչվել ավելի քան 2.250 անձ:

¹²Processing Readmission Cases in Armenia Guide and training materials for officials of the state bodies mandated to process readmission cases: http://www.un.am/up/library/Reintegration_referral_guide_eng.pdf; R.E.A.D.M.I.T Training Manual on Readmission: http://www.un.am/up/library/Readmission%20manual_eng.pdf

Բացի այդ Հայաստանում տարբեր նպատակներով (ընտանիքների վերամիավորում, ուսում, աշխատանք և այլն) բնակություն են հաստատել բազմաթիվ օտարերկրացիներ և դրանով իսկ մեր պետությունը բացառապես էմիգրանտների ծագման երկրից վերածվել է նաև իմիգրանտներ ընդունող երկրի:

Սա է պատճառը, որ ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայությունը 2016թ. ձեռնամուխ եղավ ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի մշակմանը, որի նպատակն էր լրացնել ՀՀ միգրացիոն քաղաքականության մեջ առկա բացը. սահմանել իմիգրանտների թիրախ խմբերը և նրանց ինտեգրման հնարավոր ուղղությունները՝ այս ոլորտում առկա միջազգային լավագույն փորձի հաշվառմամբ:

Արդյունքում, ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց նկատմամբ պետության կողմից վարվող քաղաքականությունը ամրագրվեց «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին հավանություն տալու մասին» 2016թ. հուլիսի 21-ի թիվ 28 և «Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկրաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» 2017թ. փետրվարի 23-ի թիվ 8 արձանագրային որոշումներում:

Ընդհանուր առմամբ ՀՀ-ում իմիգրանտների ինտեգրման քաղաքականության ապահովման նպատակով ընդունվել են շուրջ 13 իրավական ակտեր, այդ թվում.

- ՀՀ կառավարության 5 որոշումներ
- ՀՀ վարչապետի 1 որոշում
- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2 հրաման
- ՀՀ գիտության և կրթության նախարարի 1 հրաման,
- ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն պետական ծառայության պետի 4 հրամաններ:

Այս փաստաթղթերով սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում իմիգրանտների ինտեգրման առաջիկա տարիների քաղաքականության նպատակային խմբերը, ինչպես նաև նրանց ցուցաբերվելիք աջակցության տեսակները: Դրանք են՝

1. հայերեն լեզվի ուսուցման դասընթացի կազմակերպում,
2. քաղաքացիական կողմնորոշման դասընթացի կազմակերպում,
3. աջակցություն ժամանակավոր կացարանի խնդրի լուծման հարցում.

1. Հայերեն լեզվի ուսուցման դասընթաց

Դասընթացները նախատեսված են ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց և ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած անձանց համար:

Դասընթացները տարբերակված են հետևյալ հայտանիշներով՝

- հիմնական դասընթաց՝ մինչև 60 ժամ տևողությամբ

- լրացուցիչ դասընթաց՝ մինչև 120 ժամ տևողությամբ
 - դասընթաց դպրոցահասակ երեխաների համար՝ մինչև 100 ժամ տևողությամբ
- Այս դասընթացների իրականացման համար տարեկան անհրաժեշտ է շուրջ 2.4 մլն.

ՀՀ դրամ:

2. Քաղաքացիական կողմնորոշման դասընթաց

Այս դասընթացի շահառուներն են

1. ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանչված անձինք
2. ՀՀ-ում ժամանակավոր և մշտական կացության կարգավիճակ ստացած անձինք: Դասընթացի տևողությունը 30 ժամ է և այն բաղկացած է հետևյալ 4 մասերից՝
 - Ընդհանուր տեղեկություններ Հայաստանի և Հայաստանում առօրյա կյանքի մասին՝ 5 ժամ,
 - Պետության կառավարման համակարգ և գործող օրենսդրության՝ 3 ժամ,
 - Զբաղվածության, կրթության, առողջապահության, և սոցիալական ոլորտներում վարվող քաղաքականությունը և այդ համակարգերից օգտվելու հնարավորությունները՝ 15 ժամ,
 - Հայաստանի պատմությունը, մշակութային ժառանգությունը և ժամանակակից մշակույթը, ազգային ծեսեր, հասարակության մեջ ընդունված սովորույթները, ավանդույթները՝ 7 ժամ:

Այս դասընթացների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից տարեկան տրամադրվում է 2.3 մլն ՀՀ դրամ:

3. Աջակցություն ժամանակավոր կացարանի խնդրի լուծման հարցում

Ժամանակավոր կացարանի տրամադրման խնդիրը լուծվում է հետևյալ կերպ՝ ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց տրամադրվում է փոխհատուցում բնակարաններ վարձակալելու համար: Այս ծրագրի համար ՀՀ պետական բյուջեից տարեկան տրամադրվում է 13.5 մլն ՀՀ դրամ:

ԲԱԺԻՆ Բ. ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Բնակչության միգրացիան երկրակի ազդեցություն է թողնում երկրի սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական վիճակի վրա: Մի կողմից արտագաղթը նվազեցնում է լարվածությունը տեղական աշխատանքային շուկայում, իսկ արտերկրից դրամական մուտքերը կարևոր աղբյուր են բնակչության կենսամակարդակի բարելավման համար: Մյուս կողմից էլ, բնակչության արտահոսքը բացասաբար է ազդում երկրի բնակչության ժողովրդագրական ներուժի վրա՝ հանգեցնելով ինչպես մարդկանց թվի, այնպես էլ մարդկային կապիտալի որակի նվազմանը:

Բ.1. ՄԻԳՐԱՑԻԱ և ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Դիտարկվող հնգամյակում միջազգային միգրացիան շարունակում էր մնալ երկրի ժողովրդագրական զարգացման կարևոր գործոն՝ ինչպես երկարաժամկետ հեռանկարում, այնպես էլ անմիջական և անուղղակի հետևանքներով: Արտագաղթի գերակշռումը ներգաղթի նկատմամբ ուղղակիորեն ազդում է բնակչության թվաքանակի վրա և հանգեցնում է դրա անընդհատ նվազմանը: Միգրացիան նպաստում է բնակչության ծերացմանը, քանի որ հիմնականում արտագաղթում է երիտասարդ և աշխատունակ բնակչությունը:

Հայաստանում ժողովրդագրական իրավիճակը պահպանում է վատթարացման միտումները՝ վիճակագրական տվյալների համաձայն 2016թ. համեմատ 2017թ. վերջի դրությամբ մշտական բնակչության թիվը նվազել է 13,2 հազար մարդով՝ պահպանելով աճի մակարդակի բացասական միտում¹³ (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 34):

Գծապատկեր 19. 2013-2017թթ-ին Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական /միտումները, (բնակչության թիվը տարեվերջի դրությամբ)




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Վերլուծվող ժամանակահատվածում դիտվել է բնակչության բնական շարժի գործակցի վատթարացում՝ չնայած որ բնական հավելաճի դրական միտումը դեռևս պահպանվում էր (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 20): Մասնավորապես նկատելի է ծնելիության մակարդակի նվազումը՝ 2017թ. 1000 բնակչի հաշվով կենդանի ծնունդների թիվը կազմել է 12,6, համեմատության համար նշենք, որ մահացության

¹³ ՀՀ բնակչության թվաքանակը ըստ ընթացիկ տարվա տվյալների ի, ըստ 2011 թ. Մարդահամարի տվյալների՝ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալները

մակարդակի գրեթե նույնանման մակարդակի պայմաններում 2014թ.-ին 1000 բնակչի հաշվով կենդանի ծնունդների թիվը կազմում էր 14.3: 2017թ.-ին բնական հավելաճը կազմել է 10,453 համեմատության համար նշենք, որ 2014թ.-ին այն կազմել է 15,317: Արդյունքում բնական հավելաճի գործակիցը 5.1-ից (2014թ.) հասել է 3.5-ի (2017թ.):

Գծապատկեր 20. Բնակչության բնական տեղաշարժի գործակիցները 2013–2017թթ.




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Չնայած բնակչության բնական շարժի միտումների վատթարացմանը՝ ժողովրդագրական իրավիճակի վրա հիմնական ազդեցությունը գործել է միգրացիայի պահպանվող բացասական սալդոն, որը դիտարկվող վերջին տարիներին երկու անգամ գերազանցել է բնակչության բնական հավելաճը: Օրինակ, 2017թ.-ին միգրացիայի բացասական սալդոն կազմել է 24 հազար մարդ, բնական հավելաճի 10.3 հազար մարդու դիմաց:

Դիտարկվող տարիներին միգրացիայի մնացորդը պահպանել է բավականին բարձր բացասական նշանակություն՝ տարվա ընթացքում գրանցված էմիգրացիայի դեպքերը գրեթե կրկնակի գերազանցել են իմիգրացիայի դեպքերին: Չուտ միգրացիայի գործակիցը տատանվել է -7,2 և -8,6 միջակայքում:

Գծապատկեր 21. Միգրացիայի մակարդակի գործակիցները, 2013–2017թթ.




Աղբյուր՝ Հաշվարկը հիմնված ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների վրա

Ժողովրդագրական ցուցանիշների վատթարացման միտումը պայմանավորող այլ գործոններ դիտարկվող տարիներին նույնպես գրանցվել են: Քանի որ հիմնականում

արտագաղթ է աշխատունակ տարիքի բնակչությունը, աճում է ժողովրդագրական ծանրաբեռնվածության մակարդակը, որի գործակիցը 2017թ.-ին կազմել է 0,529, 2013թ.-ի 0,483-ի համեմատ: Բնական շարժի գործակիցների նվազման ֆոնին բնակչության կառուցվածքում աճել է մինչև 15 տարեկան և 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 22 և Աղյուսակ 33):

Գծապատկեր 22. Ժողովրդագրական բեռնվածություն, 2013–2017




Աղբյուր՝ Հաշվարկը հիմնված է ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների վրա

Վերլուծված տարիներին բնակչության կառուցվածքն ունեցել է ընդգծված ծերացման միտում: Միավորված ազգերի կազմակերպության կանխատեսումների համաձայն, Հայաստանի բնակչությունը 2050թ.-ին կկրճատվի 9.6%-ով 2015թ.-ի համեմատ՝ հասնելով 2,7 միլիոնի լավատեսական սցենարի դեպքում, իսկ հոռետեսականի պարագայում՝ 1,5 միլիոնի: Ըստ նույն հետազոտության, 4 տոկոսային կետով կկրճատվի 0-14 տարեկան բնակչության մասնաբաժինը և 13 տոկոսային կետով 15-59 տարեկանների մասնաբաժինը, ինչպես նաև 2 անգամ կավելանա 60 տարեկան և դրանից բարձր տարիքային խմբի թիվը:¹⁴

Անհրաժեշտ է նշել որ իգական սեռի բնակչության ծերացման մակարդակն ավելի բարձր է քան արականինը: 65 տարեկան և բարձր տարիքի կանանց մասնաբաժինը բնակչության ընդհանուր թվաքանակում 2017թ. կազմել է 13.3%, տղամարդկանցը՝ 9.6%, իսկ կին-տղամարդ հարաբերակցությունը, նույն տարիքային խմբում՝ ունեցել է աճի միտում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 23):

¹⁴ Աղբյուր՝ ՄԱԿ-ի տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն, բնակչության բաժին (2015): Աշխարհի բնակչության հեռանկարները. 2015 թ վերանայված. Նյու Յորք: Միավորված ազգերի կազմակերպություն, էջ 26, 27


Գծապատկեր 23. Բնակչության ծերացման մակարդակը, 2013-2017



Աղբյուր՝ Հաշվարկները հիմնված են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների վրա

Միգրացիոն գործընթացներում տղամարդկանց ներգրավվածության առավել բարձր մակարդակի հետևանքով բնակչության կառուցվածքում կանանց մասնաբաժինը սկսած 20-24 տարիքային խմբից սկսում է գերակայել: Ինչպես կարելի է տեսնել Գծապատկեր 24-ում բնակչության կազմը ունի ընդգծված ծերացման միտում: Այդպես 2013թ.-իամեմատ 2017թ.-ին 15-19 տարիքային խումբը նվազել է 18%-ով, 20-24 տարեկանների խումբը՝ 28%-ով, 45-49 - խումբը՝ 11%-ով և 50-54 խումբը՝ 21%-ով: Հետաքրքիր է, որ երիտասարդների խմբերում կրճատվում է կանանց թիվը, տարեցների խմբերում՝ տղամարդկանց թիվը:

Գծապատկեր 24. ՀՀ բնակչության սեռատարիքային բուրգը 2017թ. վերջի դրությամբ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Քաղաքային միգրացիան գյուղական միգրացիայի համեմատ

Դիտարկվող հնգամյակում բնակչության ընդհանուր թվաքանակի կրճատման ֆոնին, շարունակվել է ուրբանիզացման մակարդակի բարձրացման միտումը: Միաժամանակ քաղաքային բնակավայրերում առկա է արտահայտված ժողովրդագրական ծանրաբեռնվածության մակարդակ՝ հատկապես տարեցների մասնաբաժնի հաշվին: 2013թ.-ի համեմատ 2017թ.-ին քաղաքային բնակավայրերում ժողովրդագրական ծանրաբեռնվածության մակարդակն աճել է 6.8, իսկ գյուղական վայրերում՝ 1.9 տոկոսային կետով: Քաղաքային բնակավայրերում ժողովրդագրական ծանրաբեռնվածության մակարդակի ցուցանիշը 2017թ.-ին գերազանցել է գյուղական վայրերի ցուցանիշը 5.7 տոկոսային: կետով

Միևնույն ժամանակ բնակչության կազմում մինչև 15 տարեկան երեխաների մասնաբաժինը քաղաքային բնակավայրերում ավելի քիչ է քան գյուղական վայրերում, այն դեպքում, երբ 65 տարեկան և դրանից բարձր տարիքային խմբի մասնաբաժինն ավելի մեծ է քաղաքային բնակավայրերում: Այս հանգամանքը թույլ է տալիս եզրակացնել, որ քաղաքային բնակչությունն ավելի շատ է ընդգրկված միջազգային միգրացիոն գործընթացներում և բացի այդ, առկա է ներքին միգրացիա՝ ուղղված գյուղից դեպի քաղաք (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 35): Անհրաժեշտ է նշել, որ 65 տարեկան և բարձր տարիքային խմբում կին-տղամարդ հարաբերակցությունը գյուղական վայրերում 5.6 տոկոսային կետով գերազանցում է քաղաքային բնակավայրերի ցուցանիշը (157.2 գյուղերում և 151.8 քաղաքներում, 2017թ. դրությամբ): Այսինքն գյուղական վայրերում նկատվում է 65 տարեկան և բարձր տարիքի կանանց թվի աճ, ինչը իր հերթին կարող է ապագայում պահանջել հատուկ սոցիալական քաղաքականության իրականացում:

Բ. 2. ՄԻԳՐԱՑԻԱ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Բ.2.1 Տնտեսական զարգացում


Օտարերկրյա ներդրումներ

2014-2017 թթ. ընթացքում երկրի տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալներն աճել են 7%-ով՝ 120413 մլն ԱՄՆ դոլարից հասնելով մինչև 128832 մլն ԱՄՆ դոլարի: Տարվա ընթացքում կատարված առավելագույն ներդրումների ծավալը գրանցվել է 2016թ.՝ 156157,6 մլն ԱՄՆ դոլար: 2017թ. իրական հատվածում կատարված ներդրումները եղել են Ջերսիից, Գերմանիայից, Մեծ Բրիտանիայից և Նիդերլանդներից (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 36): Ներդրումները հիմնականում կատարվել են հանքարդյունաբերության և նոր հանքավայրերի բացահայտման, ֆինանսական և ապահովագրական գործունեության, անշարժ գույքի հետ կապված գործունեության, մեծածախ և մանրածախ առևտրի, մեքենաների և մոտոցիկլետների վերանորոգման, ջրամատակարարման, կոյուղու, թափոնների կառավարման և վերամշակման ոլորտներում, ինչպես նաև հյուրանոցային բիզնեսում (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 37):

Մակրոեկոնոմիկա

Միգրանտների եկամուտները, և նրանց կողմից արտերկրից ուղարկված դրամական փոխանցումները մեծ ազդեցություն են ունենում երկրի տնտեսական զարգացման վրա: Վերլուծվող ժամանակահատվածում Հայաստանում մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի անվանական արժեքը գրանցել է որոշակի անկում մինչև 2015թ. (նվազագույն նշանակությունը 3,512 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով): Հետագա 2 տարիները առանձնացել են աճի միտումով՝ 2017 թվականին գրանցելով 3872 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով նշանակություն (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 38): Մոտավորապես նույն դինամիկան գրանցվել է նաև դրամական փոխանցումների հոսքում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 25): Հարկ է նշել, որ ՀՆԱ-ում դրամական փոխանցումների տեսակարար կշիռը այս ժամանակահատվածում նվազել է 6.7 տոկոսային կետով: Մասնավորապես դրամական փոխանցումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2015թ. կազմել է 19.7%, իսկ արդեն 2017թ. այս ցուցանիշը նվազելով հասել է 13.0%-ի: Այնուամենայնիվ, փոխանցումների տարեկան ծավալի բացարձակ նշանակությունը նախորդ՝ 2016թ. համեմատ ավելացել է 12%-ով կամ 164 հազ. ԱՄՆ դոլարով (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 39):

Գծապատկեր 25. 2013-2017թթ. ընթացքում ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով և աճի գործակիցը



Աղբյուր՝ Հաշվարկները հիմնված են ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումների վրա


Տնային տնտեսությունները և դրամական փոխանցումները

Դրամական փոխանցումները հանդիսանում են աղքատության հաղթահարման կարևոր աղբյուր տնային տնտեսությունների համար: Չնայած վերջին տարիներին դրանց մասնաբաժինը դրամական եկամուտներում նվազել է, այնուամենայնիվ արտերկրից ստացվող փոխանցումները պահպանում են կարևոր նշանակությունը: Դրամական փոխանցումների մասնաբաժինը տնային տնտեսությունների դրամական եկամուտներում 2017թ. կազմել է 8.5%՝ գրանցելով 1.4 տոկոսային կետի անկում 2013թ. համեմատ: Անհրաժեշտ է նշել, որ անկման նմանատիպ միտումներ են գրանցել նաև այլ ցուցանիշներ: Միաժամանակ պահպանվել է աղքատության բարձր մակարդակը՝ աղքատության բացարձակ շեմից ցածր բնակչության տեսակարար կշիռը 2017թ. կազմել

է 25.7%: Անհրաժեշտ է նշել, որ աղքատության շեմից ցածր գտնվող տնային տնտեսություններում բնակվող մինչև 18 տարեկան երեխաների մասնաբաժինը նույն տարիքի ամբողջ բնակչության թվաքանակում 2017թ. կազմել է 30.8%: Այսինքն կարելի է ենթադրել, որ աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքները հիմնականում բազմազավակ են (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 26):

Արտերկրից ստացվող դրամական միջոցների հոսքը նպաստում է բացարձակ աղքատության կրճատմանը, սակայն միևնույն ժամանակ հանգեցնում է անհավասարության աճին դրամական փոխանցումներ ստացող և դրամական փոխանցումներ չստացող տնային տնտեսությունների միջև: Այդ մասին վկայում է աղքատության հարաբերական շեմից ցածր բնակչության տեսակարար կշիռը, որը 2017թ. կազմել է 19.1%: Այս ցուցանիշի առավելագույն նշանակությունը գրանցվել է 2016թ.՝ 21.8%, ինչը համընկնում է արտերկրից ստացվող դրամական փոխանցումների ծավալի անկման հետ (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 40):


Գծապատկեր 26. Տնային տնտեսությունների աղքատության մակարդակը, 2013-2017



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

«ՀՀ միգրացիոն իրավիճակի գնահատում՝ ընտրանքային հետազոտության միջոցով» ուսումնասիրության համաձայն նյութական բավարարվածության մակարդակը ավելի ցածր է այն տնային տնտեսություններում, որոնք չունեն աշխատանքային միգրանտներ: 2017թ. տվյալներով աշխատանքային միգրանտ ունեցող այն տնային տնտեսությունների մասնաբաժինը, որոնք իրենց բարեկեցության մակարդակը գնահատում են «վատ» կամ «շատ վատ» կազմել է 39.3%, աշխատանքային միգրանտ չունեցողների դեպքում այս ցուցանիշը կազմում է 41.4%: Չնայած աշխատանքային միգրանտ ունեցող և չունեցող տնային տնտեսությունների միջև տարբերությունը այնքան էլ մեծ չի և կազմում է ընդամենը 2.1 տոկոսային կետ, այնուամենայնիվ անգամ այս նվազագույն տարբերությունը վկայում է այն մասին, որ միգրանտներից ստացվող դրամական փոխանցումները ազդում են տնային տնտեսությունների բարեկեցության բարելավման վրա:


Գծապատկեր 27. 2013-2017թթ. տնային տնտեսությունների նյութական վիճակի մակարդակը (վատ, շատ վատ), %



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Հարցված տնային տնտեսությունների 15.7%-ի համար արտերկրից ուղարկվող դրամական փոխանցումները եկամտի հիմնական աղբյուրն են հանդիսացել, իսկ 9.5%-ի համար, լրացուցիչ եկամտի աղբյուր: Միգրանտներ ունեցող տնային տնտեսությունների 40.5%-ի համար միգրանտներից ստացվող դրամական փոխանցումները եկամտի հիմնական աղբյուրն է, իսկ 16.9%-ի համար՝ լրացուցիչ եկամտի աղբյուր (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 28):

Գծապատկեր 28. Տնային տնտեսությունների մասնաբաժինների բաշխվածությունը ըստ արտերկրից ստացվող եկամուտների աղբյուրների



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ


Բ.3 ՄԻԳՐԱՑԻԱ, ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ և ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Բ. 3.1. Աշխատաշուկայի առանձնահատկությունները

Առկա վիճակագրական տվյալների համաձայն, աշխատանքային տարիքի բնակչության մասնաբաժինը 2013թ. համեմատ 2017թ. նվազել է 67.6%-ից հասնելով 65.4%-ի (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 29): Առաջին հայացքից այս անկումը աննշան է, սակայն այն վկայում է բնակչության կազմում տեղի ունեցող

փոփոխությունների մասին: Այսպես., 2017թ. 0-14 տարեկան բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 2013թ. համեմատ աճել է 19.1%-ից մինչև 20.2%, մինևույն ժամանակ աճ է գրանցել նաև 65 տարեկան և բարձր տարիքային խմբի մասնաբաժինը 10.6% -ից մինչև 11.6%: Արդյունքում 2017թ. ժողովրդագրական ծանրաբեռնվածության մակարդակը 2013թ համեմատ 47.9%-ից հասել է 52.9%: Եթե երիտասարդ աշխատունակ բնակչության միգրացիան շարունակվի, աշխատունակ տարիքի բնակչության թիվը կշարունակի նվազել, ինչը կարող է բացասաբար անդրադառնալ աշխատանքային շուկայի վրա: Համաձայն վիճակագրական ծառայության կողմից հրապարակվող տվյալների աշխատանքային տարիքի բնակչության մասնաբաժինը տարեց-տարի գրանցում է նվազման կայուն միտում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 29 և Աղյուսակ 33):


Գծապատկեր 29. Աշխատունակ տարիքի բնակչություն



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Բնակչության տարիքային կազմի փոփոխությանը և ժողովրդագրական ծանրաբեռնվածության մեծացմանը զուգահեռ փոփոխվում է նաև բնակչության գենդերային կազմը, ինչի հիմնական պատճառը միգրացիոն գործընթացներում տղամարդկանց ներգրավվածության առավել բարձր մակարդակն է: Դիտարկվող ամբողջ ժամանակահատվածում կին-տղամարդ հարաբերակցությունը՝ 100 տղամարդուն բաժին ընկնող կանանց ցուցանիշը, գրանցել է աճ, ինչպես աշխատաշուկա նոր մտնող՝ 15-39 տարեկանների, այնպես էլ աշխատաշուկայից դուրս՝ եկող 40-64 տարիքային խմբում (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 30 և Աղյուսակ 43): Գործընթացի հետագա խորացումը կարող է հանգեցնել ավանդաբար տղամարդկային համարվող ոլորտներում աշխատուժի պակասի:


Գծապատկեր 30. Աշխատուժին վերաբերող ժողովրդագրական գնդերային ցուցանիշներ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Մի շարք ցուցանիշներ հաստատում են աշխատուժի վատթարացումը: Մասնավորապես 2013թ. համեմատ 2017թ. տեղի է ունեցել աշխատուժի մասնակցության մակարդակի նվազում 63.4%-ից մինչև 61.9%, գրանցվել է զբաղվածության մակարդակի՝ աշխատանքային ռեսուրսներում զբաղվածների մասնաբաժնի, անկում 53.2% -ից մինչև 50.1% (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 31): Բացի այդ աճել է աշխատունակ տարիքի բնակչության տարիքային կառուցվածքի ցուցանիշը՝ 40-64 տարեկան բնակչության թվաքանակի հարաբերակցությունը 15-39 տարեկանների թվին, որը 2013թ. հավասար էր 78,0%-ի, իսկ արդեն 2017թ. կազմել է 82,1% (առավել մանրամասն տես Աղյուսակ 43):

Գծապատկեր 31 Աշխատուժի մասնակցության ցուցանիշների դինամիկան




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

2015-2016թթ.-ին տեղի է ունեցել գործազրկության մակարդակի աճ 2013թ. համեմատ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 32), ինչը կարող էր պայմանավորված լինել աշխատաշուկայի վրա Ռուսաստանի միգրացիոն քաղաքականության խստացմամբ, ինչպես նաև ՌԴ-ում տնտեսական վիճակի վատթարացմամբ, ինչի արդյունքում ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտների մի ստվար զանգված չմեկնեց արտագնա աշխատանքի՝ համալրելով գործազուրկների շարքերը: Դրան զուգահեռ նույն ժամանակահատվածում նկատվել է երիտասարդների

շրջանում գործազրկության մակարդակի նվազում, ինչը առաջին հայացքից դրական միտում է: Մակայն այս ցուցանիշը մեկնաբանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ նույն ժամանակաշրջանում գրանցվել է 15-29 տարեկան բնակչության թվաքանակի նվազում (տե՛ս Աղյուսակ 34): Այսինքն, այս երևույթը կարող է երիտասարդների միգրացիոն գործընթացներում ակտիվ ներգրավվածության արդյունքում: Ինչ վերաբերում է 2017թ., ապա կարելի է արձանագրել, որ գործազրկության մակարդակի անկման միտումը շարունակվել է, իսկ երիտասարդների շրջանում նախորդող տարիներին գրանցված միտումը չի շարունակվել և գրանցել է 2,4 տոկոսային կետի աճ՝ կազմելով 30%:

Գծաատկեր 32. Գործազրկության ցուցանիշների դինամիկան




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Բ.3.2. Աշխատանքային միգրացիա

Աշխատանքային միգրացիայի վերաբերյալ վիճակագրական տվյալների ստացման հիմնական աղբյուր են հանդիսանում հետազոտությունների գնահատված ցուցանիշները: Այսպես, կատարված վերջին հետազոտության արդյունքներով 2016թ. ՀՀ-ից սկիզբ առնող միգրացիոն հոսքերում գերակշռել են աշխատանքային միգրանտները: Ընդհանուր առմամբ 2014-2016թթ. արտերկիր մեկնածների ընդհանուր թվի 85.5%-ը մեկնել է աշխատանքի նպատակով, որոնց 53.9%-ը մինչև մեկ տարի ժամկետով սեզոնային աշխատանքի, 11.0%-ը՝ կարճաժամկետ ոչ սեզոնային, 20,5%-ը՝ երկարաժամկետ, ավելի քան մեկ տարի:

Գծապատկեր 33. 2014-2016թթ. արտերկիր մեկնածների բաշխումը ըստ միգրացիայի բնույթի




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Մոնիթորինգի հետազոտությունների տվյալների համաձայն 16 տարեկանից բարձր բնակչության մոտ 8 տոկոսը ներգրավված է աշխատանքային միգրացիայի գործընթացում: Աշխատանքային միգրանտների ավելի քան 90% -ը 20-ից 54 տարեկան է, իսկ տղամարդկանց մասնաբաժինը կազմում է 89%:

Հարցված քաղաքացիների ճնշող մեծամասնությունը որպես մեկնելու հիմնական պատճառ նշել են զբաղվածության հետ կապված խնդիրները: Ինչ վերաբերում է Հայաստանից աշխատանքային միգրացիայի աշխարհագրությանը, ապա հիմնական ուղղությունը Ռուսաստանի Դաշնություն է՝ աշխատանքային միգրանտների 93%-ը մեկնել է հենց ՌԴ: Նույն հետազոտության արդյունքներով 2014-2016թթ. միգրացիոն տեղաշարժերը ունեցել են բացասական սալդո. ելքերը գերազանցել են մուտքերին 61.5 հազար մարդով: Պետք է նշել, որ նույն ժամանակահատվածում 63.5 հազար քաղաքացիներ հեռացել են այլ երկրներում մշտական բնակություն հաստատելու նպատակով: Մեկնածուներից 76,4%-ի հիմնական նպատակը եղել է աշխատանքը: Նրանցից 52.9%-ի համար սեզոնային աշխատանքը, 13.3%-ի՝ ոչ սեզոնային կարճաժամկետ աշխատանքը, իսկ 6.5%-ի համար՝ աշխատանքը, որը տևում է ավելի քան մեկ տարի (առավել մանրամասն տե՛ս Աղյուսակ 46):


Գծապատկեր 34. 2014-2016 թթ. արտերկրներ մեկնած միգրանտների բաշխումը ըստ նպատակի



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Միգրացիոն գործընթացում ներգրավված մարդկանց թվի աճի հետ մեկտեղ առկա է նաև միգրացիոն տեղաշարժերի ակտիվացումը: Եթե 2012-2015թթ-ին մեկ միգրանտի հաշվով գրանցվել է 2.86 տեղաշարժ, ապա 2014-2017թթ. ընթացքում այդ ցուցանիշը հասել է 3.07 տեղաշարժի (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 35 և Աղյուսակ 45):


Գծապատկեր 35. Միգրանտների թվի և միգրացիոն տեղաշարժի հիմնական ցուցանիշները



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

Վերլուծվող ժամանակահատվածում դիտվել է միգրացիոն գործընթացներում ներգրավված անդամ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժնի աճ: 2015թ. համեմատ 2017թ. 3,3 տոկոսային կետով աճել է նաև արտերկրում գտնվող անդամ ունեցող տնային տնտեսությունների մասնաբաժինը: Անհրաժեշտ է նշել, որ այս ցուցանիշի աճը առավել ցայտուն է քաղաքային բնակավայրերում բնակվող տնային տնտեսություններում, որտեղ աճը կազմել էր 4,5 տոկոսային կետ: Տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտությունների արդյունքները վկայում են որ տնային տնտեսությունների ամբողջ թվի ¼-ը ունի արտերկրում գտնվող անդամ (առավել մանրամասն տե՛ս Գծապատկեր 36 և Աղյուսակ 46):

Գծապատկեր 36. Տնային տնտեսությունների բաշխումը ըստ տնտային տնտեսության միգրանտ-անդամների կարգավիճակի,%



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի հրապարակումներ

ԲԱԺԻՆ Գ: ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Գ.1. ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում միգրացիայի կառավարմանն ուղղված առաջին համապարփակ փաստաթուղթը՝ Բնակչության միգրացիայի պետական կարգավորման հայեցակարգը ընդունվել է, 2000թ.-ին և առանձին փոփոխությունների է ենթարկվել 2004թ.-ին: Այդ փաստաթղթերում միգրանտների ու փախստականների իրավունքների միջազգայնորեն ամրագրված սկզբունքների ու չափանիշների հիման վրա ամփոփված են Հայաստանի Հանրապետության կառավարության մոտեցումները բնակչության տեղաշարժերի կարգավորման ուղղությամբ: Հենց այդ տարիներին դրվեցին միգրացիայի ոլորտում ՀՀ ազգային օրենսդրության հիմքերը, միգրացիայի կարգավորման հարցը ներառվեց ՀՀ միջպետական հարաբերությունների օրակարգ, ՀՀ-ն միացավ միգրացիան կանոնակարգող մի շարք միջազգային կոնվենցիաների: Այդուհանդերձ, 2000 և 2004թթ. ընդունված փաստաթղթերը ավելի շուտ կրում էին հռչակագրային բնույթ և դրանք չունեին կոնկրետ գործողությունների ծրագրեր:

2010թ. դեկտեմբերի 30-ին ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվեց ՀՀ միգրացիոն քաղաքականության ռազմավարության երրորդ փաստաթուղթը՝ «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. գործողությունների ծրագիրը»: Այն նախատեսում էր մի շարք միջոցառումների իրականացում 14 գերակա ուղղություններով: Գործողությունների ծրագիրը հիմք հանդիսացավ Հայաստանի միգրացիոն կառավարման համակարգը օրենսդրական և ինստիտուցիոնալ առումներով Եվրամիության համակարգին համահունչ դարձնելու ուղղությամբ: Նկատելի առաջընթաց արձանագրվեց ԵՄ և աշխարհի այլ երկրների հետ օրինական միգրացիայի հենքով համագործակցության և ապօրինի (անօրինական) միգրացիայի դեմ պայքարի ու դրա կանխարգելման հարցերում:

2017 թ-ի մարտին ՀՀ կառավարության կողմից հաստատված Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021 թվականների ռազմավարությունը հանդիսանում է միգրացիոն քաղաքականության սահմանման 4-րդ հիմնարար փաստաթուղթը: Այն ներառում է Ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիր, որը ընդգրկում է Հայաստանի առջև ծառայած մարտահրավերների հիման վրա սահմանված հետևյալ հիմնախնդիրները: Դրանք են՝

- օժանդակում օրինական միգրացիային.
- միջազգային պաշտպանության համակարգի կատարելագործում.
- աջակցություն երկարաժամկետ իմիգրանտների, փախստականների ինտեգրմանը և վերադարձող միգրանտների վերաինտեգրմանը.
- միգրացիա և զարգացում.
- արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանություն.

- անօրինական միգրացիայի կանխարգելում և երևույթի դեմ պայքար.
- միջազգային համագործակցության ընդլայնում.
- միգրացիայի կառավարման համակարգի հետագա զարգացում:

Գ.2. ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

2014 թ. դեկտեմբերի 17-ին ընդունվել է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» ՀՀ օրենքը:

2015 թվականի դեկտեմբերի 16-ին ՀՀ ընդունվել է «Փախստականների և ապաստանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը իսկ 2016թ.-ին դրա կիրարկումն ապահովող իրավական ակտերը, որոնցով ՀՀ-ում ապաստան հայցողների և փախստականների իրավունքները առավելագույնս ներդաշնակեցվել են միջազգային, մասնավորապես՝ եվրոպական չափանիշներին: Մասնավորապես՝

- ՀՀ կառավարության 2016թ. սեպտեմբերի 15-ին թիվ 951-Ն որոշմամբ ընդունվել է «Ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման անհնարինության դեպքում՝ կենսաապահովման հիմնական կարիքները հոգալու հնարավորություն չունեցող ապաստան հայցողներին դրամական օգնություն տրամադրելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կանոնակարգվում են ժամանակավոր տեղավորման կենտրոնում չտեղավորված ապաստան հայցողներին բնակարան վարձակալելու նպատակով դրամական օգնության տրամադրման հետ կապված հարցերը.

- 2016թ. հոկտեմբերի 17-ին ընդունվել է «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ ապաստան հայցողները որպես խոցելի խումբ ընդգրկվել են հանրային պաշտպանի կողմից մատուցվող անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շարքում.

- 2016թ. հոկտեմբերի 19-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, համաձայն որի՝ ազատազրկման վայրերում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում ապաստանի հայց կարող են ներկայացնել ազատազրկման վայրի վարչակազմի միջոցով.

- ՀՀ կառավարության 2016թ. նոյեմբերի 10-ին թիվ 1147-Ն որոշմամբ ընդունվել է «ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության սահմանապահ գորքերի, ոստիկանության կամ ազատազրկման վայրերի վարչակազմի կողմից ապաստանի խնդրանքի ընդունման և այն լիազոր մարմնին փոխանցման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որով կանոնակարգվում են ապաստանի խնդրանքի ընդունման և այն ՄՊԾ փոխանցելու հետ կապված հարցերը.

- ՀՀ կառավարության 2016թ. դեկտեմբերի 15-ի թիվ 1268-Ն որոշմամբ ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 19-ի N 1440-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշումը, որում ամրագրվել է առանց ուղեկցողի և ընտանիքից անջատված ապաստան հայցող

երեխաների՝ առաջնահերթության կարգով ժամանակավոր տեղավորման կենտրոնում տեղավորման իրավունքը, ինչպես նաև նախատեսվել են դրույթներ կենտրոնում ներքին կարգապահական կանոնների և դրանց խախտման հետևանքների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 12-ի թիվ N 493-Ն որոշմամբ հաստատվել է «Օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու և մերժելու կարգը և ժամկետները, համապատասխան աշխատանքով օտարերկրացուն չապահովելու դեպքում գործատուի կողմից ծախսերի հատուցման կարգը և չափերը, օտարերկրացի աշխատողի համար գործատուին աշխատանքի թույլտվություն տրամադրելու համար անհրաժեշտ փաստաթղթերի և բարձր որակավորում ունեցող օտարերկրացի մասնագետներին առանց աշխատանքի թույլտվության Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք տվող մասնագիտությունների ցանկերը»:

2016թ. հունիսի 5-ին ստորագրվել է հուշագիր Հայաստանի Հանրապետության Կառավարության և Իրանի Իսլամական Հանրապետության Կառավարության միջև քաղաքացիների առանց մուտքի արտոնագրի այցելությունների մասին:

2016թ. հուլիսի 7-ին ՀՀ կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում 2016-2018 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը:

2016թ. հուլիսի 21-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, ինչպես նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման քաղաքականության հայեցակարգին, իսկ 2017թ. փետրվարի 23-ին հաստատել է հայեցակարգի կիրարկմանն ուղղված գործողությունների ծրագիրը:

2016թ. հոկտեմբերի 27-ին ստորագրվել է «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ֆրանսիայի Հանրապետության Կառավարության միջև միգրացիոն գործընկերության վերաբերյալ» Համաձայնագիրը:

Համաձայնագրի հիմնական նպատակն է իրավական հիմք ապահովել 2011 թվականի հոկտեմբերի 27-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև շարժունակության շուրջ գործընկերության վերաբերյալ» համատեղ հռչակագրով ամրագրված մտադրությունների իրականացման համար:

2017թ. մարտի 23-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության միգրացիայի քաղաքականության 2017-2021թթ. ռազմավարությանը, իսկ 2017թ. օգոստոսի 31-ին հաստատել է ռազմավարության արդյունավետ իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիրը:

2017թ. հոկտեմբերի 19-ին ՀՀ կառավարությունը հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության ընդլայնված միգրացիոն պրոֆիլի կառուցվածքին և ցուցանիշների ցանկին:

Գ.3. Ինստիտուցիոնալ կառուցվածքը

ՀՀ-ում գործում է միգրացիայի կառավարման ապակենտրոնացված մոդելը, որի դեպքում միգրացիոն լիազորությունները բաժանված են տարբեր պետական մարմինների միջև: Միգրացիոն ոլորտում իրավասություններ ունեն Ոստիկանությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Ազգային անվտանգության ծառայությունը, իսկ հիմնական պատասխանատու մարմին հանդիսացող Միգրացիոն ծառայությունը գործում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ենթակայությամբ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության միգրացիոն ծառայություն

Ներկայիս միգրացիոն ծառայության պատմությունը սկիզբ է առնում 1990թ.-ի դեկտեմբերից, երբ կազմավորվել է ՀՀ նախարարների խորհրդին առընթեր փախստականների հարցերի կոմիտեն: Հետագայում այդ մարմնի ինչպես անվանումը, այնպես էլ ինստիտուցիոնալ պատկանելիությունը մի քանի անգամ փոխվել է, մինչև ՀՀ նախագահի 2009թ. նոյեմբերի 18-ի ՆՀ-286-Ն հրամանագիրը, ըստ որի Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության համակարգում ստեղծվեց միգրացիոն պետական ծառայությունը՝ որպես նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին,

Ծառայության նպատակներն են՝

- Միգրացիոն գործընթացների պետական կարգավորումը,
- Ապաստանի համակարգի կատարելագործումը,
- ՀՀ-ում ապաստան ստացած և փախստական ճանաչված անձանց, ինչպես նաև երկարաժամկետ իմիգրանտների՝ հասարակության մեջ ինտեգրումը,
- Վերադարձի (ռեադմիսիայի) գործընթացի կատարելագործումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը կոչված է մշակելու և իրականացնելու ՀՀ կառավարության քաղաքականությունը աշխատանքի և սոցիալական հարցերի պաշտպանության բնագավառում:

Միգրացիայի ոլորտում նախարարությանը վերապահված է հետևյալ գործառույթը.

- աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժը կարգավորող օրենսդրության կատարելագործման նպատակով առաջարկությունների մշակում:

Նախարարության կազմում գործում է Զբաղվածության պետական գործակալությունը որի գործառույթների շրջանակներում առկա են միգրացիոն ոլորտին առնչվող հետևյալ գործառույթները.

- օտարերկրյա պետություններում աշխատանքային գործունեության ծավալման, մասնագիտական ուսուցման ցանկություն ունեցող անձանց իր իրավասության սահմաններում տեղեկատվության տրամադրում և խորհրդատվության

իրականացում, ինչպես նաև նրանց և օտարերկրյա պետությունների գործատուների միջև միջնորդության իրականացում:

- արտագնա աշխատանքների կազմակերպման, ինչպես նաև աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության հարցերի մասին կնքված Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի շրջանակներում՝ արտագնա աշխատանքների համար աշխատանքային միգրանտների հավաքագրման, վերապատրաստման կազմակերպում:

ՀՀ ոստիկանություն

ՀՀ ոստիկանությունն իր լիազորությունների սահմաններում մշակում և իրականացնում է ՀՀ կառավարության քաղաքականությունը հանցավորության և այլ հակաիրավական ոտնձգությունների դեմ պայքարի, հասարակական կարգի ու անվտանգության ապահովման ոլորտում:

Միգրացիայի ոլորտում ՀՀ ոստիկանությունն իրականացնում է հետևյալ գործառույթը.

- Հայաստանի Հանրապետության քաղաքացիների անձնագրավորման, հաշվառման, բնակչության պետական ռեգիստրի և ընտրողների ռեգիստրի վարման, օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետության մուտքի արտոնագրեր, կացության կարգավիճակներ տալու, նրանց կողմից Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործելու, տարանցիկ տեղաշարժվելու, տարածքից դուրս գալու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կանոնների պահպանման ուղղությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայությունների ու մարմինների գործունեության կազմակերպում և դրանց նկատմամբ հսկողության իրականացում:

2003թ.-ին ՀՀ ոստիկանության Կազմակերպված հանցավորության դեմ պայքարի վարչության կառուցվածքում ձևավորվել է և անօրինական միգրացիայի դեմ պայքարի ստորաբաժանումը, որը 2005թ. հունիսի 6-ից դարձել է Անօրինական միգրացիայի դեմ պայքարի և միջազգային համագործակցության բաժին:

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

